


# ՀԱՅ-ԵԿԵՂ ԵՑԻ

ԱՄՍԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ



ՕԳՈՍՏՈՍ — 1901

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ — ԹԻ ԺԸ

- էՁ
- |  |     |
|--|-----|
| 1. Խմբագրական . — Առաջարկ Բարեփոխութեան<br>ի մասին Կուսակցութեան եւ Անուանու-<br>թեան Եկեղեցականաց . | 225 |
| 2. Կեանք Յիսուսի . — Մասն Ե .  | 231 |
| 3. Քարոզ . — Տօն Վերացնելու հայի .   | 239 |
| 4. Ընկիր Խորհրդածութիւնք .   | 244 |
| 5. Թղթակցութիւն . —<br>Նահակներ Փարիզէն . — Եկեղեցականաց<br>Անուանութեան Խնդիր .                     | 246 |
| 6. Քերթուած . —<br>Երկու Ոտիւներ (Շար . եւ Վերջ) .   | 251 |

— 0 —

Հանդիսիս բաժանորդագինն է ամեն  
սեղի համար սարեկան 4 Շիլինգ կամ 5 Ֆրանք,  
վեցամսեայ 2 Շիլինգ կամ 2½ Ֆրանք թղթասարաւ .  
Տանկաստանի բաղաճաց մէջ ձեռքէ կը ծախուի  
հասը՝ Երկու (2) Դանեկանի :

— 0 —

Խմբագրութեան կամ բաժանորդագրութեան  
վերաբերեալ որ եւ իցէ գրութիւն պէտք է ուղղել  
առ Խմբագրութիւն Հանդիսիս, հետեւեալ հասցէի .

**ARMENIAN RECTORY,**

**Upper Brook Street,**

**MANCHESTER.**

# ՀԱՅ-ԵԿԵՂԵՑԻ

ԱՄՍԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ ԵՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ

ԹԻԻ 18

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ ԹԳՈՍՏՈՍ 1901

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱՌԱՋԱՐԿ ԲԱՐԵՓՈՆՈՒԹԵԱՆ

Ի Մ Ա Ս Ի Ն

ԿՈՒՍԱՆԿՐՕՆՈՒԹԵԱՆ ԵՆ ՍՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆԱՑ

Հայ Եկեղեցականաց ամուսնական օրինաց և կրօնակրօնութեան զարգացման այլև այլ աստիճանները նկարագրելէ վերջ (Տես Հայ-Եկեղեցի էջ 193-201) այժմ կ'արժէ քննել թէ որո՞նք են բարեփոխութեան կարօտ կէտերն, և թէ այդ բարեփոխութիւն ի՞նչ կերպով կարելի է և պէտք է կատարել: Նախ մեր շնորհակալութիւնը կը յայտնենք Փարիզի Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տէր Վասիլապուն Քահանային որ փութեցած է երկու ընտիր եւ սրտառուչ նամակներով, զորս ընթերցողը պիտի գտնէ թերթիս թըրթակցութեան մասին մէջ, իւր հայեացքներ յայտնելու այս կարեւոր խնդրոյ նկատմամբ, որ ամենայն ուշադրութեան արժանի են և զմեզ ևս կըքաջալերեն աւելի վստահութեամբ գրել սոյն նիւթի վերայ:

Եկեղեցին՝ նման երկրիս վերայ դանուող այլ ամենայն հաստատութեանց՝ փոփոխութեան և բարեփոխութեան ենթակայ է: Այս աշխարհի վերայ նոյն իսկ եկեղեցական և

կրօնական հաստատութեանց մասին կարելի չէ կատարելութիւն ենթադրել : Գիտենք որ Առաքելոց ժամանակ Եկեղեցին բոլորովին սաղմնային գրութեան մէջ կը զգտնուէր , և զինի Առաքելոց ժամանակի և պարագայից համեմատ մեծամեծ փոփոխութիւններ կրեց , և այսօր , յետ 2, 000 ամաց , այնքան կը տարբերի Առաքելական դարու Եկեղեցիէն որքան հասունցած խնձորն՝ խնձորի կուտէն : Եթէ օրինակի համար մեր Եկեղեցւոյ կացութիւնն Գրիգոր Լուսաւորչի ժամանակ՝ բազդատելու լինիւք մեր այժմեան Եկեղեցւոյ հետ , պիտի տեսնենք որ տարբերութիւնը շատ մեծ է . եկեղեցական ծէսը և արարողութիւնք , կրօնամունք և աղօթք , սովորոյթք և կարգուկանոն բոլորովին տարբեր են : Միայն Աւետարանի էական վարդապետութեան մասն է որ անփոփոխ մնացած է և մինչև յաւիտեան անփոփոխելի պիտի մնայ : Քանի որ քահանայից և եպիսկոպոսաց ամուսնութեան օրէնք Աւետարանի էական վարդապետութեան մէկ մասն չի կազմեր , ասել է որ նոյն իսկ եթէ աւելի զօրաւոր պատճառ ևս չունենայինք , այս կէտին մէջ փոփոխութիւնը , կամ լաւ ևս՝ բարեփոխութիւնը , ներելի էր : Բայց կրօնաթիրթիս վերջին թուով հրատարակեալ հետազօտութեամբ տեսանք որ շատ աւելի զօրաւոր փաստեր կան որ այս մասին բարեփոխութիւնը անհրաժեշտ կը կացուցանեն : Այդ հետազօտութեամբ տեսանք որ Նոր Կտակարանն եկեղեցականաց վերայ ամուրթութիւնը իբրև պարտաորիչ պայման չի դնել , այլ ընդ հակառակն , կ'ենթադրէ որ եկեղեցականք ( թէ քահանայք և թէ եպիսկոպոսներ ) ընդհանրապէս ամուսնացեալ մարդիկ լինին , և ամուրթութիւնն իբրև բացառութիւն կընկատուի և կը յանձնարարուի միմիայն այնոցիկ որք կարօզն են տանիլ :

Տեսանք նոյնպէս որ նախկին ( արևելեան որպէս և արեւմտեան ) Եկեղեցին մինչև եօթներորդ դարու վերջերն որևէ որոշ և յայտնի օրէնք չունէր կղերականաց ամուսնութեան համար . ոմանք կ'ամուսնանային , այլք ամուրթ կը մնային : Տրուեան ժողովն ( յամի 680 ) վերջնական տնօրէնութիւնն ըրաւ , որոյ համեմատ յունական և յունաղաւան Եկեղեցիք

կը վարուին մինչև ցայսօր :

Փառով Հայ. Եկեղեցւոյն , յայտնի է որ 680ի ժողովն մեզ համար որեւէ կարեւորութիւն կամ նշանակութիւն չի կրնար ունենալ , քանի որ մեր Եկեղեցին յամի 451 Քաղկեդոնի ժողովոյ առթիւ պաշտօնապէս բաժանուեցաւ միւս Եկեղեցիներէն , և իւր հաւատքն ու դաւանութիւնն և եկեղեցական կարգ ու կանոնն հաստատեց միմիայն Ս. Աւետարանի և երեք Տրիգլորական ( այսինքն , Նիկիոյ , Եփեսոսի և Կ. Պօլսոյ ) ժողովոց վերայ : Նոյնպէս առանք որ Հայ. Եկեղեցին որևէ սղգային ժողովով կամ Հայրապետական վճռամբ չհաստատեց արդի սովորութիւնն ի մասին ամուսնութեան և ամուրիութեան կղերականաց : Այլ ժամանակի դժբաղդ պարագայներ և յունաց Եփեղեցւոյ օրինակն անզգալապէս մացուցին և տարբացուցին ու հաստատեցին մեր մէջ և մեր եկեղեցականաց վերայ այն ծանր բեռն որոյ ներքեւ կը հեծի այժմ և՛ Եկեղեցին և՛ Ազգն :

Յիշեալ հետազօտութեամբ ցոյց տուինք անժիտելի փաստիւք՝ որ մեր Եկեղեցին ոչ թէ միայն պաշտօնապէս հաստատած եւ արտօնած չէ ներկայ սովորութիւն , այլ իւր ներկայ պաշտօնական Մաշտոցն ( որ այս մասին մեր Եկեղեցւոյ կանոնադիրն կը ներկայացնէ ) բացարձակապէս հրպահանջէ որ ձեռնադրութեան ներկայացող եպիսկոպոսացուն իւր թէմի քահանայից մէջէն պէտք է ընտրուած լինի , եւ վանական կամ անապատական ( այսինքն , կուսակրօն ) կեանք վարելու ուխտ արած չլինի . եւ ամենախիստ լեզուաւ կը դատապարտէ՝ կուսակրօն քահանայից ժողովրդեան մէջ առաջնորդութեան պաշտօն վարելն , որ առթիւ գործ անած ահաւոր խօսքերն աստ նորէն կրկնելն աւելորդ չենք համարեր . — « վասն որոյ կանոնս է սուրբ հայրապետացն թէ , կուսակրօն քահանայ թէ սուրբ լինի ժողովրդեան , անխեղ է թնն և խղճութեամբ իւր : »

Միւս կողմանէ չենք կրնար ուրանալ որ զրական օրէնքէ աւելի զօրաւոր է այն անբող սովորութիւնն որ , նոյն իսկ հակառակ նախկին Եկեղեցւոյ և զրական օրինաց , տարբացած և ընդունուած կանոն դարձած է : Որքան որ մեր

եկեղեցականաց ամուրիութեան և ամուսնութեան ներկայ սովորութիւնն բոլորովին հակառակ է Ս. Կրօնց ներողամիտ ոգւոյն և նախկին Եկեղեցւոյ ազատութեան, դարձեալ այդ է մեր Եկեղեցւոյ ներկայ օրէնք, որքան ժամանակ օրինաւոր միջոցաւ (Հայրապետական վճռով կամ ընդհանուր Ազգային եկեղեցական ժողովով) փոխուած չէ:

Այս այսպէս լինելով՝ կրբաւէ որ մեր Եկեղեցւոյ Սրբազնազոյն Հայրապետն խորհրդակցութեամբ բանիբուն եկեղեցականաց ամենէն կարեւոր և աչքի զարնող փոփոխութիւններն արտօնէ: Եկեղեցականաց ամուսնութեան խնդիր հաւատոյ մէկ մասն չլինելով և միմիայն եկեղեցականաց ընկերային մէկ պարագային պատկանելով, Սրբ. Հայրապետն բնաւ պէտք չունի և ոչ իսկ ընդհանուր Ազգային ժողովոյ դիմելու կամ այլոց խորհուրդ հարցնելու. բաւական է որ ներմուծելի բարեկարգութիւն մեր նախորդ և ներկայ յօգուածին մէջ գծեալ նախկին Եկեղեցւոյ շաւիղովը կատարուի: Եթէ Սրբ. Հայրապետն արժան կրհամարի ի պահանջել հարկին ամուսնալուծութեան վճիռ տալ, որ շատ աւելի ծանրակշիռ և մեծ պատասխանատուութիւն կ'ենթադրէ, ուրեմն ո՞րքան առաւել սզաւ լինելու է և պարտական է Հայրապետն եկեղեցականաց կենցաղավարութեան հին կանոնն վերահաստատել ի բուժումն բազմադիմի չարեաց: Մենք նպատակ չունինք թուել աստ այն գայթակղալից պատմութիւններ որոցմէ իւրաքանչիւր հայ հոգեւորական կամ աշխարհական տասնեակներով կրնայ պատմել: Բարեփոխութեան անհրաժեշտ պէտքն անուրանալի է:

Արժ. Տէրվուստապուռ Հայր մէկ կանոն կ'առաջարկէ որ իւր համառօտութեամբն հանդերձ խնդրոյս ամբողջ սահմանը կը բովանդակէ. այն է՝ «Եկեղեցականաց կուսակրօնաբեան կառնւոր յինեյն յաւեկայն ժամու, եւ անուսնաւոր իեանքի սգաստարիւնն՝ նւիւն նւսն:» — Հարկաւ այս օրէնք վանական կամ անապատական կիեաց եւ կանոնաց հետ որեւէ առնչութիւն չունի: Այս օրէնք միմիայն այն եկեղեցականաց համար է որք աշխտորհքի մէջ, այս ինքն, վանքէ դուրս, պաշ-

տօն վարելու, ժողովուրդ հովուելու. կոչուած են : Վանքեր կրնան դարձեալ իւրեանց հնաւանդ սովորութեան համեմատ իւրեանց միաբաններէն ցկեանս կամ ինչպէս կուզեն՝ ուխտ պահանջել . միայն թէ Հայ. Եկեղեցւոյ օրինաց համեմատ այդ վանական ուխտագիրներ իւրեանց վանքերէն դուրս հովուութեան պաշտօն վարելու չեն :

Տէր Վռամչապուհ Հօր առաջարկեալ կանոնն, որում եւ մենք ըստ ամենայնի համամիտ եմք, այսպէս ըմբռնելու է : — Երբ ձեռնադրող եպիսկոպոսն տեսնէ որ քահանայութեան ընծայացուն « ունի զուսումն քահանայութեան լիով, եւ զգիտութիւն աստուածային օրինաց », առանց հարցնելու թէ ամուսնացած է թէ ոչ, կամ պիտի ամուսնանայ թէ ոչ, ինչպէս որ մեր Մաշտոցն եւս չի հարցնեք պաշտօնապէս, քահանայ ձեռնադրելու է, եւ ազատութիւն տալու է նմա ամուսնանալ երբ յարմար դատէ, կամ ամուրի մնալ, եթէ ամուրի մնալ կրփափագի : Այս կանոնի համեմատ, բնականաբար, այրիացեալ քահանայք եւս ըստ կամաց եւ յարմարութեան կ'ամուսնանան կամ այրիութեան մէջ կրմնան :

Դարերէ ի վեր արդի սովորութեան վարժուած ժողովուրդն պիտի տարօրինակ դոնէ այս առաջարկութիւն, պիտի զարմանայ եւ զայրանայ : Արդարեւ առաջին եկեղեցականի պատկն մի քիչ պիտի զարմացնէ, բայց զայրոյթն չուսով պիտի դադրի երբ բացատրուի որ ոչ ամուսնական կեանքն եւ ոչ Ս. Պատկի օրհնութիւնն անսուրբ կամ անարժան գործ կրնեք կայացնէ : Արդէն ամուսնացեալ քահանայն կնոջ կենակցութեամբ կ'ապրի եւ կըհաւատայ Սրբազան Առաքելոյն հետ եւ մեր Եկեղեցւոյն հետ թէ « Պատուական է ամուսնութիւն, եւ սուրբ է անկողինս և նոցա : » Եթէ մի դայթակղելի պարագայ կայ այս գործին մէջ՝ հարսանեաց կեր ու խումի, շուսյտութեան եւ արեցեցութեան հանդէսներն են որ ընդհանրապէս տեղի կունենան այդ առթիւ : Բայց պատուոյ զգացում ունեցող ո՞ր եկեղեցականը կրնորէ որ այդպիսի աւելորդ խնճոյքներ տեղի աւնենան իւր պատճառաւ : Մի թէ պիտի կարծուի թէ Ս. Պատկը վաւերացած չի լինիր, եթէ առանց հարսանեաց ազմկալից հանդէսների, երեք չորս վկայից ներկայութեամբ եկեղեցական կարգը կատարուի հանդարտօրէն : Ուրբան որ

եկեղեցականաց ամուսնութեան և ամուսնութեան ներկայ սովորութիւն բոլորովին հակառակ է Ս. Գրոց ներողամիտ ոգւոյն և նախկին Եկեղեցւոյ ազատութեան, զարձեալ այդ է մեր Եկեղեցւոյ ներկայ օրէնք, որքան ժամանակ օրինաւոր միջոցաւ (Հայրապետական վճռով կամ ընդհանուր Ազգային եկեղեցական ժողովով) փոխուած չէ:

Այս այսպէս լինելով՝ կըբաւէ որ մեր Եկեղեցւոյ Սրբազնագոյն Հայրապետն խորհրդակցութեամբ բանիբուն եկեղեցականաց ամենէն կարեւոր և աչքի զարնող փոփոխութիւններն արտօնէ: Եկեղեցականաց ամուսնութեան խնդիր հաւատոյ մէկ մասն չլինելով և միմիայն եկեղեցականաց ընկերային մէկ պարագային պատկանելով, Սրբ. Հայրապետն բնաւ պէտք չունի և ոչ իսկ ընդհանուր Ազգային ժողովոյ դիմելու կամ այլոց խորհուրդ հարցնելու. բաւական է որ ներմուծելի բարեկարգութիւն մեր նախորդ և ներկայ յօդուածին մէջ գծեալ նախկին Եկեղեցւոյ շաւիղովը կատարուի: Եթէ Սրբ. Հայրապետն արժան կըհամարի ի պահանջել հարկին ամուսնալուծութեան վճիռ տալ, որ շատ աւելի ծանրակշիռ և մեծ պատասխանատուութիւն կ'ենթադրէ, ուրեմն ո՞րքան առաւել օգտաւ լինելու է և պարտական է Հայրապետն եկեղեցականաց կենցաղավարութեան հին կանոնն վերահաստատել ի բուժումն բազմադիմի չարեաց: Մենք նպատակ չունիմք թուել աստ այն գայթակղալից պատմութիւններ որոցմէ իւրաքանչիւր հայ հոգեւորական կամ աշխարհական տասնեակներով կրնայ պատմել: Բարեփոխութեան անհրաժեշտ պէտքն անուրանալի է:

Արժ. Տէրվոսմչապուհ Հայր մէկ կանոն կ'առաջարկէ որ իւր համառօտութեամբն հանդերձ խնդրոյս ամբողջ սահմանը կըբովանդակէ. այն է՝ «Եկեղեցականաց կուսակրօնութեան կառոււոր շինելն յաւեանայն ժամու, եւ ամուսնաւոր Եսակի արասուքիւնն՝ նմին նման:» — Հարկաւ այս օրէնք վանական կամ անապատական կենաց եւ կանոնաց հետ որեւէ առնչութիւն չունի: Այս օրէնք միմիայն այն եկեղեցականաց համար է որք աշխտօրհրի մէջ, այս ինքն, վանքէ գուրս, պաշ-

տօն վարելու, ժողովուրդ հովուելու. կոչուած են : Վանքեր կրնան դարձեալ իւրեանց հնաւանդ սովորութեան համեմատ իւրեանց միաբաններէն ցկեանս կամ ինչպէս կուզեն՝ ուխտ պահանջել . միայն թէ Հայ. Եկեղեցւոյ օրինաց համեմատ այդ վանական ուխտադիրներ իւրեանց վանքերէն դուրս հովուութեան պաշտօն վարելու չեն :

Տէր Վրամշապուհ Հօր առաջարկեալ կանոնն, որում եւ մենք ըստ ամենայնի համամիտ եմք, այսպէս ըմբռնելու է : — Երբ ձեռնադրող եպիսկոպոսն տեսնէ որ քահանայութեան ընծայացուն « ունի զուսումն քահանայութեան լիով, եւ զգիտութիւն աստուածային օրինաց », առանց հարցնելու թէ ամուսնացած է թէ ոչ, կամ պիտի ամուսնանայ թէ ոչ, ինչպէս որ մեր Մաշտոցն եւս չի հարցնել պաշտօնապէս, քահանայ ձեռնադրելու է, եւ ազատութիւն տալու է նմա ամուսնանալ երբ յարմար դատէ, կամ ամուրի մնալ, եթէ ամուրի մնալ կրփափագի : Այս կանոնի համեմատ, բնականաբար, այրիացեալ քահանայք եւս ըստ կամաց եւ յարմարութեան կ'ամուսնանան կամ այրիութեան մէջ կ'ըմնան :

Դարերէ ի վեր արդի սովորութեան վարժուած ժողովուրդն պիտի տարօրինակ դտնէ այս առաջարկութիւն, պիտի զարմանայ եւ զայրանայ : Արդարեւ առաջին եկեղեցականիւսակն մի քիչ պիտի զարմայնէ, բայց զայրոյթն շուտով պիտի դադրի երբ բացատրուի որ ոչ ամուսնակիսն կեանքն եւ ոչ Ս. Պատկի օրհնութիւնն անսուրբ կամ անարժան գործ կ'ընելկայացնէ : Արդէն ամուսնացեալ քահանայն կ'նոջ կենակցութեամբ կ'ապրի եւ կ'ընաւատայ Սրբազան Առաքելոյն հետ եւ մեր Եկեղեցւոյն հետ թէ « Պատուական է ամուսնութիւն, եւ սուրբ է նկողնէր նոցա : » Եթէ մի գայթակղելի պարագայ կայ այս գործին մէջ՝ հարսանեաց կեր ու խումի, շուայտութեան եւ արեցեցութեան հանդէսներն են որ ընդհանրապէս տեղի կունենան այդ առթիւ : Բայց պատուոյ զգացում ունեցող ո՞ր եկեղեցականը կ'ընէրէ որ այդպիսի աւելորդ խնճոյքներ տեղի ունենան իւր պատճառաւ : Մի թէ պիտի կարծուի թէ Ս. Պատկը վաւերացած չի լինիր, եթէ առանց հարսանեաց աղմկալից հանդէսների, երեք չորս վկայից ներկայութեամբ եկեղեցական կարգը կատարուի հանդարտօրէն : Ուրբան որ

զինի ձեռնադրութեան ամուսնանալ չկարենալն վնասակար է, նոյնքան անպատեհ է ևս մեր քահանայից թշուառութեան գլխաւ որ պատճառն եղած է՝ նախ քան զձեռնադրութիւնն անպատճառ ամուսնացած լինելու խտուրթիւնն : Շատ պատուական և քահանայութեան կոչում ունեցող երիտասարդներ կան ( և միշտ գտնուած են ) մեր մէջ , որ ձեռնադրուելէ հրաժարած են կամ իւրեանց ձեռնադրութիւն տասնեակ տարիներով յետաձգած են , որովհետև չեն կրցած ամուսնացէս ամուսնանալ կամ վերջնապէս որոշել ամուրի կեանք անցնել մինչև ցածր : Մեզք չէ՞ որ մեր Եկեղեցին այսպիսի կարեւոր ոյժերէ զրկուի մի այնպիսի պատճառաւ որ խորագպետութեան և կրօնի հետ որեւէ առնչութիւն չունի , այլ մի պարզ ընկերային խնդիր է , և մարդկային բնութեան ու ի սկզբանէ արարածոց յԱրարչէն հաստատեալ մի անխուսափելի օրինաց զէմ մարտել մարտնչել կրպանանջէ անհնարին այլ տարապարտ ճգամք , և աւա՛ղ դուն ուրեք սակաւ յաջողութեամբ , մանաւանդ աշխարհի մէջ ապրող և ժողովրդեան հետ խառնուող եկեղեցականաց համար :

Այս առաջարկութիւններ կընրկայացնեմք մեր ներողամիտ ընթերցողաց և կըհաւատամք թէ Ս. Գրոց ոգւոյն և մեր նախկին Եկեղեցւոյ աւանդութեանց համեմատ խօսած եմք : Սակայն եթէ կան այնպիսի կէտեր որ մեր ուշադրութենէ վրիպած են , մեծապէս շնորհապարտ պիտի լինիմք եթէ մեր բարեսէր ընթերցողք բարեհաճին հաղորդել մեզ այդ կէտեր ի հրատարակութիւն : Մեր ամենուս ջանքը լինելու է Հայ Ս. Եկեղեցւոյ բարձրացումն , և առաւելապէս հոգեւորական դասին կրպատկանի այս ծանրակշիռ խնդիրն ձեռք առնել և գոհացուցիչ կերպով լուծելու աշխատել ի բուժումն ամբաւ չարեաց և դայթակղութեանց և ի շինութիւն հաւատացելոց :



ԿԵԱՆՔ ՅԻՍՈՒՍԻ

ԻՐ ԾՆՆԴԵՆԷՆ ՄԻՆՁԵՒ ՀԱՄԲԱՌՆԱԼԸ ՓԱՌՕՔ Ի ՅԵՐԿԻՆՍ

Ի ԳԵՐ. ՏԵՐ ՂԵՒՈՆԴ ԵՊԻՍԿՈՊՈՍԷ ՇԷՄԱՆԵԱՆ

Ե

Յիսուսի փախուսք՝ յեգիպտոս . — Բերքեհեհի մա-  
նուկներուն կոստրածը . — Թե Յիսուս իոք Նազովրեցի է :

Ս շխարհքի մէջ ամէն ուրախութեան հետեւանքը՝  
տրամուկիւն է : Փրկչի քառամսորեայ ընծայումը՝  
այնքան աստուածային ու վեհագոյն . Մոգերու երկրպագու-  
թիւնը, աննշան ու զձուձ այրի մը մէջ, այնքան փառա-  
ւոր ու միսթարական, ահաւոր աղէտ մը յառաջ պիտի բե-  
րէին անշուշտ՝ քիչ ժամանակամիջոցի մէջ, և այդ աղէտը  
եղաւ Հերովդէսի հալածանքը՝ անմեղ այդ Մանուկը կորսնց-  
նելու համար . . . հալածանք անողը՝ որուն մէջ երեք նշա-  
նաւոր զէպքեր լրումն ևն խոստացուած Մեսիային նկատ-  
մամբ եղած բոլոր մարգարէութիւններուն :

Այդ երեք զէպքերուն առաջինն է՝ Յիսուսի փախուստը  
յեգիպտոս . երկրորդը՝ Բեթլէհէմի ու չրջականերու անմեղ  
մանկանց կոտորածը . իսկ երրորդը՝ վերադարձն ի Նազա-  
րեթ՝ զորս կը պատմէ Ս. Մատթէոս Աւետարանիչ՝ Հրէից ցոյց  
տալու համար թէ՛ խոստացուած Մեսիան իսկապէս Յիսուս է :

Հետեւինք մենք ալ Սրբազան Աւետարանչին Պատմու-  
թեան ընթացքին :

« Եւ իբրևս գնացին նորա (մոգերը) անտի — կ'ըսէ Աւե-  
տարանիչը — ահա Հրեշտակ Տեառն երեւէր ի տեսեան  
Յովսեփու և ասէր . Արի առ զմանուկդ և զմայր իւր՝ և  
փախիր յեգիպտոս, և անդ լինիլի ցորժամ ասացից քեզ,  
քանզի ի ինզիբ է Հերովդէս կորուսանել զմանուկդ : Եւ  
նա յարուցեալ առ զմանուկն և զմայր իւր գիշերի՝ և  
գնաց յեգիպտոս, և անդ էր մինչև ցվախձան Հերովդի :  
Չի լցցի ասացեալն ի Տեառնէ ի ձեռն մարգարէին՝ որ  
ասէ . յեգիպտոսէ կոչեցից զորդի իմ » (Մատթ. Բ. 13-15) : Այս  
է ահա առաջին զէպքը իր մարգարէութիւնովը հանդերձ :

Այո՛, Հերովդէս անհամբեր կըսպասէր Մոգերուն վերա-  
դարձին, բայց տեսաւ որ խաբուած էր : Կատաղութիւնը

տակաւ սկսաւ լլկել սնագութ բռնաւորը , ալ ուրիշ բան չէր խորհեր՝ եթէ ոչ ձեռք անցընել այդ մանուկը . . . բայց ինչպէս որոշել այնքան անհամար մանուկներուն մէջէն զայն որ Իսրայելի թագաւոր սահմանուած էր :

. . . Չար ու վայրագ խորհուրդ մը կը պաշարէ իսկոյն իր միտքը . Չարդել , կոտորել կը հրամայէ բոլոր մանուկները , « յերկեմնից և ի խոնարհ » որ կը գտնուէին Բեթլեհէմի և անոր սահմաններուն մէջ . . . բայց մարդկային բռնութիւնը՝ որքան հզօր ալ ըլլայ և ահաւոր , ինչ կարող է ընել աստուածային անհաս ու անդիմապրելի խորհուրդներուն հանդէպ : Երկնքի բարձունքէն Հայրն ամենակալ կը հսկէր իր ամենասիրելի Որդւոյն վրայ : Նոր փարաւորն ալ այնչափ՝ որչափ իր հնագոյն նախորդը , անյաջող պիտի ելլէր իր պատրաստած ծրագիրներուն մէջ : Նոր Մովսէսը պիտի փրկուէր արեան հեղեղներու մէջէն՝ ուր կ'ուզէին խեղդել զինքը՝ ինչպէս հին Մովսէսը՝ Նեղոսի ջուրերուն մէջ . . . ուստի կը հրամայէ Աստուած Յովսեփու՝ իբրև ընտանիքի պետին՝ որ մանուկն ու անոր մայրը առած Եգիպտոս փախչի . . . և հրամանը կը կատարուի անմիջապէս :

Յամաքային լեզու մը միայն կը բաժնէր Փարաւորններու երկիրը՝ Պաղեստինէն , ու երեք չորս օրուան ուղեւորութիւն մը բաւական էր ուղեւորներուն՝ Եգիպտոսի սահմանը մտնելու՝ որ այն ատենները Երկիր Փրկութեան էր Իսրայելի զաւակներուն համար՝ որոնք երկար տարիներէ հետէ ընակութիւն հաստատած էին հոն և , ժողովրդանոցներ կանգնած՝ ազատ կերպով կը պաշտէին իրենց կրօնը . ուստի ընական էր որ Յովսեփ ալ հոն քաշուէր՝ Հերովդէսի հալածանքէն ազատ մնալու համար :

Ս. Աւետարանը լուրթեամբ կ'անցնի Ս. Հնտանիքին Եգիպտոս երթալու յարակից պարագաներու մասին , վասն զի նշանակութեան արժանի բան մը չէր պատահած այդ ուղեւորութեան ատեն : Անսպասի ճամբաները տեսան անոնց անցնելը . անծանօթ վայրեր օթեւան ընծայեցին իրենց , և սակայն որ և է հրաշք մը տեղի չ'ունեցաւ , անշուշտ այն պատճառաւ որ՝ իր փառքը յայտնելու համար Յիսուսի ժամանակը դեռ հասած չէր : Նոյնպէս Ս. Աւետարանը չի յայտներ թէ՛ Յիսուս և իր ծնողքը որչափ ատեն մնացին յեգիպտոս . — հաւանօրէն քիչ ժամանակ մնացած ըլլալուն , վասն զի Բեթլեհէմի մանուկներուն կոտորածը Հերովդէսի մահուանէն քիչ առաջ տեղի ունեցաւ , և Արքեղայոս

կրթագաւորէր Հրէաստանի վրայ՝ երբ Յովսէփի և Մարիամ, մանուկն Յիսուս իրենց հետ, վերադարձան Իսրայէլի երկիրը :

Ս. Աւետարանը կը լռէ նոյնպէս՝ Եգիպտոսի մէջ անոնց ունեցած կենցաղին վրայ . սակայն յայտնի է որ, ինչպէս Նազարեթի մէջ, նոյնպէս և հոն՝ իր ձեռքի աշխատութեամբ կ'ապրեցնէր Յովսէփի իր ընտանիքը՝ միշտ աղքատիկ, միշտ աննշան վիճակի մէջ ու ամէնէն անմասնօթ :

Յիսուսի փախուստը յեգիպտոս՝ միշտ քննադատութեան առարկայ եղած է « Հրէից գայթակղութեան, ու Հեթանոսաց յիմարութեան » առջև : — « Ի՞նչ հարկ էր — կ'ըսեն — որ Յիսուս՝ Աստուած ըլլալով, Եգիպտոս փախչելու ստիպուէր հալածանքին երեսէն աշխարհի բռնաւորի մը՝ որուն կրնար անմիջապէս ջախջախել չար նպատակները, կործանել բռնաւորը ու փրկել այնքան անմեղ արխաններ՝ որ իր պատճառաւ ի զուր թափուեցան : Հարկ էր որ տիեզերաց Արարիչն այդքան՝ սոսկար, այնքան ստորնամար » : — Այո, մարդկային տկար խորհրդածութեամբ ու գատողութեամբ այսպէս կ'երեւի . հրաշքներ, նշաններ, շուք ու շքեղութիւն աւելի յարմար ու վայելուչ կ'երեւնան մեր մանկանացու տկար աչիւրուն . բայց աստուածային խորհուրդները մարդկային խորհուրդներ չեն, Աստուած հրաշքով չընկեր ամէն բան . յաճախ իրերու ընթացքին հետեւիլ՝ Իր անհուն Նախախնամութեան հրաշայիւթն է : Առաքեալը կ'ըսէ Յիսուսի համար թէ՛ « Ինքն իսկ տկարութեամբ զգածեալ է » (Եբբ. Ե. 2) . ուստի այս կ'սմային տկարութեամբ՝ կամաւ ենթարկուեցաւ մարդկային կեանքի ամենէն յետին պայմաններուն իսկ, մանաւանդ թէ՛ չի գործեց և ոչ մէկ հրաշք՝ մինչեւ որ մարդկային փրկութեան համար իր աստուածային գործառնութեանց ժամն ու ժամանակը հասաւ : Պահուեցաւ միշտ իր թշնամիներուն ներկայութենէն . ուստի, և իր մանկութեան ատեն, արճամարճանք չի համարեց իրեն, օտար երկրի մէջ ապաստանարան մը գտնել՝ հեռու մնալու համար բռնաւորի մը սպառնալիքներէն :

Ըսինք նաեւ որ, Յիսուսի փախուստը յեգիպտոս՝ ոչ այնքան իր անձը փրկելու համար էր՝ որքան սորվեցնելու համար ամէնուս՝ թէ մենք ալ զմեզ փրկելու եւնք աշխարհի լարած որոգայթներէն : Նոյն ինքն Յիսուս՝ երանի կուտայ անոնց՝ որոնք կը հալածուին ու կը նախատուին իր Անուանը համար : Այս է՝ աշխարհի վրայ՝ Եկեղեցւոյ ճակատագիրը՝ որուն հնազանդեցաւ, առաջին անգամ, ինքը

Յիսուս , որպէս զի մենք ալ համբերել գիտնանք վիշտերու , սիրով տանիմք հալածանաց՝ յանուն քրիստոնէութեան , և արժանի ըլլանք զօրութեան և համբերութեան շնորհաց՝ տոկալու համար չարերուն ամէն անիրաւութեանց ու հակառակութեանց : Իր Անձին օրինակաւ սորվեցուց մեզ՝ խորտակել այն շղթաները՝ որոնք կը կապեն զմեզ այնպիսի ապիրատ աշխարհքի մը հետ՝ որուն հալածանքները միայն մէկ նպատակի կը ձգտին , այն է զմեզ մեր ձեռքով վատթարացնել : աշխարհ մը՝ վտանգներով լի , որմէ չենք կարող մեր անձը ազատել՝ եթէ ոչ՝ փախուստ տալով :

Այսու հանդերձ , « ոչ է աշակերտ մեծ քան զվարդապետ իւր » . հետեւաբար մենք ալ պարտաւոր ենք , նման երկնաւոր Վարդապետին , խոնարհիլ նախախնամութեան ամէն յօժարութեանց , առանց մոռնալու թէ՛ յաղթանակը յախտեան պիտի մնայ՝ ոչ թէ անողորմ դահիճներուն , այլ անոնց անմեղ ու համբերատար զոհերուն :

Սակայն , « իբրև ետես Հերովդէս թէ խաբեցաւ ի մոգուց անտի , զայրացաւ յոյժ » (Մատ. Բ. 16) : Բացայայտ լուր մը չի կրնալով առնել , ու յիշելով ինչ որ մտերն ըսին՝ իրենց տեսած Աստղին նկատմամբ , հետեւեցուց թէ այդ նորածին մանուկ — թագաւորը գիեղցիկ էր տակաւին , վասն զի Հրեայ կանանց սովորութիւնն էր առ նուազն երկամ մը գիեցնել իրենց զաւակները . ուստի « առաքեաց կոտորեաց զամենայն մանկունս որ էին ի Բեթղեհէմ և յամենայն սահմանս նորա՝ յերկեմնից և ի խոնարհ » (Մատ. Բ. 16) : Անմիջապէս գործադրուեցաւ բարբարոսական սոյն հրամանը՝ բայց ոչ յախուռն ու անխտիր կերպով , այլ հետեւելով արձանագրութեանց : Մտան դահիճները ամէն տուն , ընտրեցին իրենց զոհերը և սրէ անցւցին զանոնք՝ իրենց մայրերուն աչքին առջեւ : « Յայժամ կատարեցաւ ասացեալն ի ձեռն Երեմեայ մարգարէին որ ասէ , Չայն գութեաց ի Հռամա , ողբումն և լալումն և աշխարումն յոյժ . Հռաքել լայր զորդիս իւր և ոչ կամէր մխիթարել զի ոչ էին » (Մատ. Բ. 17-18) :

Երեմիայի սոյն մարգարէութիւնն արգարև կը վերաբերի Նաբուղարդանի գերի վարած տարաբախտ Հրեաներուն՝ որոնք շղթայակապ աքսորուեցան՝ անգամ մըն ալ չի դառնալու պայմանաւ , և որոնց վրայ Հռաքել՝ Յակոբայ սիրելի ամուսինը՝ ողբ կը բառնայ՝ յանձին ներկայացնելով նոյն գերիներու դժբախտ մայրերուն զառն կսկիծները (Եբէժ. ԼԱ. 15.

և 1), բայց յարգական Աւետարանիչը՝ մարգարէին սոյն նախագուշակութեանց մէջ, տեսաւ նաև այն արցունքները՝ զոր ժամանակ յետոյ մայրեր պիտի թափէին մի և նոյն տեղւոյն վրայ՝ Հռոմայ մէջ, վասն զի Հռոմա Բեթլէհէմէ շատ հեռու չէր: Ինչ որ կ'ըլլար Իսրայելացիներուն, խորհրդաւոր կապակցութիւն մը ունէր ապագայ Մեսիային: Ամէն բան՝ յանձին Իսրայելացւոց, պատկերն էր որ կըկատարուէր յանձին Յիսուսի. հետեւաբար և Երեմիայի գոյժը՝ ճշմարիտ մարգարէութիւն մըն էր այն ողբոց և աշխարհաց՝ որ կատարուեցաւ մարտիրոսութեան այս ամենաթարմ պտուղներուն՝ Բեթլէհէմի ու շրջակայից անմեղ մանուկ — զառնուկներուն վրայ: Երեմիա իրաւամբ կըկոչէ զՀռոպել՝ լալու և ողբալու իր զաւկներուն վրայ, կարթնցնէ զայն իր գերեզմանէն՝ որ մօտիկն է Բեթլէհէմի, և կարծես կըտեսնէ բովանդակ Իսրայելի սոյն ազգկէզ մայրը՝ որ յուզուած ի տես կոտորածին, դուրս կըթռչի իր գերեզմանէն՝ կրթալ ողբալու համար սնդու ձկնով զէս սուբին ներքեւ իջնող այդ անմեղուկ ծաղիկներուն վրայ, զորս Շարականը, թերեւս Ս. Ներսէս Ծնորհայի, վստմ բանաստեղծութեամբ մը կընկարագրէ ըսելով — « Դիակունք սուրբ մանկանցն որպէս զծաղիկ նոսնհեաց հարեալք ի կարկսէ և անկեալ ի սուրբ Բեթլէհէմ »:

Յայտնի չէ զոճերուն թիւը. ոմանք 14, 000 ի և ոմանք մինչև 144, 000 ի կըհամեն, սակայն երկուքն ալ շատ չափազանց են, որովհետև Բեթլէհէմ փոքրիկ գեղ մըն էր՝ ուր, ինչպէս նաև իր շրջականերն, և այդչափ մանուկ անկարելի էր գտնել:

Աստուած սակայն չի յապաղեց պատժել ճիւղը՝ որ հրամայած էր այդ սոսկ սլի կոտորածը: Իբրև նոր Անտիքոս՝ և՛ Հերովդէս ահաւոր ախտէ մը բռնուեցաւ, ախտ՝ որ յասուածակոյս կողմանէ կարծես այսպիսի մարդախոշոշ բռնաւորներու համար սահմանուած է: Յովսեպոս՝ Հրեայ պատմիչը, շատ սարսափելի կերպով կընկարագրէ զայն: — « Հուր տապախառն տենդոյ վառեալ սոչորէր ի նմա, և մոլաքոր անբերելի ուտէր զամենայն մարմին նորա, և ցաւք անհնարինք անկեալ էին զազեօք նորա, և զոտս նորա ուտէր այտումն իբր ջրգողելոյ, և զգոգն նորա սրորումն՝ ի ծնանել զորգունս, և զարծեալ ի թափել ոգւոցն արպելեալ շունչն տառապեցուցանէր զնա, և ճգնութիւն նեղութեան վշտացուցանէր զամենայն անգամս նորա » (Յովս. Դպ. Ա-ԻԱ).

էջ 119. Թարգմ. Սրբ. Վարդ. Իլևկայայ. Տպ. Ս. Էջ. 1787) : Օգոստոս Կայսր՝ լսելով որ Հերովդէս՝ իր մահուանէն հինգ օր առաջ, կատաղաբար չարչրկեր էր իր Անտիպատրոս որդին, և արգէն լսած ըլլալով Բեթլէհէմի անմեղ մանկանց կոտորածը, — «լաւ է, գոչեր էր, Հերովդէսի խոզն ըլլալ քան անոր որդին» : — Բռնաւորը, վերջապէս, զգալով իր մտաւուտ մահը, իբրեւ վերջին անգթութիւն, Հրէից բոլոր մեծամեծները հաւաքել տալով Երիբովի ձիարձակարանին մէջ, հրամայեր էր որ բանտարկէն զանոնք, և, իր վախճանի ատենը, թրէ անցնեն — «Կարող եմ — ըսեր էր — սուզ մեծ առնել ի վերայ իմ ի ձեռն այլոց, և եղիցի ի վերայ իմ կոծ սքանչելի լալեաց, և երեւելի պատիւ թաղման իմում եթէ առնիցէք զպատուէր իմ. զմարդիկ՝ զայս, զորս միանգամ եղեալ են ի բանտի, նոյն ժամայն, իբրեւ մեռանեմ ես, կացուցիք ի վերայ նոցա զօրականս և կոտորեսցեն զնոսա, զի ամենայն Հրէաստան առ հասարակ և ամենայն տուն յակումայ կամս իւրեանց լացցեն ի վերայ իմ» (Յով. Գոթ. Ա. - ԻԱ. Էջ 120) : Թէպէտ անգործադրելի մնաց այս վայրագ հրամանը, սակայն այսօր գերագոյն վկայութիւն մը կրճանդիսանայ պատմութեան մէջ՝ անգթութեան այդ ճիւղին՝ որ մինչեւ իր վերջին շունչը մասնաւոր հաճոյք մը զգացեր էր մարդկային արեան մէջ լողալու : Իր ամուսինը՝ Մարիանա, իր երեք զաւակները՝ Աղեքսանդրոս, Արիստորուզոս, Անտիպատրոս, վեց հազարի չափ փարիսեցիներ, Բեթլէհէմի անմեղ մանուկները՝ իր անգթութեան ամենամեծ զոհերն եղած էին . . . և սակայն աշխարհ այդ բռնաւորին մեծ պնտըր սուտաւ . . .

Փչեց Հերովդէս իր ապականեալ հոգին անլուր տանջանքներու մէջ՝ Փրկչի 1 թուականին և Հոովմայեցւոց 750, Մարտի 25ին, 37 տարի թագաւորելէն ետքը :

«Եւ ի վախճանին Հերովդի, ահա Հրեշտակ Տեառն ի տեսչեան երեւէր Յովսեփայ յԵգիպտոս և ասէր. Արի առ զմանուկդ և զմայր իւր, և գնա յերկիրն Իսրայելի. զի մեռան որ ինդրէին զանձն մանկանդ» (Մատթ. Բ. 19-20) : — «Մեռան» . . . Այս ձայնը իբրեւ յաղթութեան երգ մը հնչեց Յովսեփի ականջին . . . Այս, պարտուած էր Հերովդէս, յաղթական էր Յիսուս : Այո, այսպէս կ'անհետին բոլոր հաւածողները. բայց Յիսուս, բայց մարտիրոսները, բայց իր աշակերտները . . . անոնք միշտ կ'ապրին, անոնք յաւիտեան կրթագաւորեն :

Յոսիպի միշտ հնազանդ և վստահ յաւէտ իր Աստուծոյն , կ'ելլէ անմիջապէս , կ'առնէ մանուկն ու անոր մայրը , ճամբայ կ'իջնայ , կրճամի Իսրայելի երկիրը . կրճատազրէ վերստին Բեթլէհէմի մէջ հաստատուիլ , իր յիշատակները հոն կընրուիրեն զինքը և այդպէս ալ կըվայելէր . աշխարհի միահեծան Տէրը պէտք էր որ Երուսաղէմի մօտիկը՝ իր սիրած Տաճարին քովիկն ապրէր , սակայն աստուածային խորհուրդն այդպէս չէր . — « Եւ իբրեւ լուաւ եթէ Արքեղայոս թագաւորեաց Հրէաստանի փոխանակ Հերովդի հօրն իւրոյ , երկեան երթալ անգր , և հրաման առեալ ի տեսլեան՝ զնաց ի կողմանս Գալիլեացոց և եկեալ ընակեցաւ ի քաղաքին՝ որ կոչէր Նազարեթ , զի լցցի բան մարգարէիցն , թէ Նազովրեցի կոչեսցի » (Մատթ. Բ. 22-23) :

Արքեղայոս ալ հօրը՝ Հերովդէսի պէս անողոք , անգութ ու կասկածոտ էր : Իր թագաւորութիւնը հռչակած էր երեք հազար իսրայելացիներու արիւնը մանելով (Յովէպտ. Բ. Գալ. Ա. 125) . ուստի խոհեմութիւն չի համարեց այնպիսի բռնաւորի մը խիստ մօտը երթալ հաստատել իր բնակութիւնը ու վտանգի ենթարկել իր աչքին լոյսը՝ զՅիսուան մանուկ : Վարանեցաւ , ահն ու սարսափը պաշարեց զինքը . աստուածային խորհրդոց զիմեց և հրաման ստացաւ Գալիլեայի երկիրն անցնել ու Նազարեթի մէջ բնակել , որով կը կատարուի մարգարէներուն գուշակութիւնը թէ՛ « Նազովրեցի կոչեսցի » :

Իրօք Նազովրեցի կոչուեցաւ Յիսուս՝ ինչպէս որ յայտնեւ էին հինաւորեց պատգամները : Արքազան Աւետարանիչը կը հաստատէ զայս՝ ցոյց տալու համար մեզ թէ՛ Հրէաներուն կողմանէ իբրեւ նախատական տիտղոս մը Յիսուսի վերազրուած այս անունը՝ Նազովրեցի , ընդհակառակն անոր համար պատուոյ տրտղոս մըն էր , և արգարեւ Յիսուս՝ իր Անձին վրայ կատարելապէս ցոյց տուաւ այդ անունն բովանդակ նշանակութիւնը : Նազովրեցի եղաւ մարմնապէս և Փիղիքապէս , որովհետեւ Նազարեթի մէջ բնակեցաւ : Նազովրեցի կոչուեցաւ նոյնպէս մասնաւոր խորհրդով , որովհետեւ Նազարեթ կընշանակէ ծաղիկ , շառաւիղ՝ որ գուրգուրանօք ու հոգածութեամբ կըրնչակուի և կըպատասպարուի արեւուն տապէն ու ձմրան ցուրտէն : Նազարեթ կոչուած էր այդ փոքրիկ քաղաքը՝ իր դիրքի գեղեցկութեանը համար , և այդ պատճառաւ « Գալիլեայի ծաղիկը » կ'անուանէին զայն . ոչ ապաքէն և Յիսուս՝ շառաւիղն է Յեսսէի , ծաղիկ երկ-

նային , Եսայի մարգարէէն գուշակուած , որ Գալիլեայի ամուլ երկրէն պիտի բարձրանար և օրհնութիւն պիտի տփռէր բոլոր աշխարհի վրայ :

Եւ Հայրն երկնաւոր՝ Իսրայելի այս ճշմարիտ Ծայրիկին , Յեսսէի այս անգուգակուն շառաւիղին վրայ թեւարկեց իր աստուածային ամէն խնամքներովը : Ո՞վ չսքանչանար իր Միածին Որդւոյն համար այն գորովալիւր խնամքներուն վրայ : Որպիտի՞ զգուշութիւններ ամէն վտանգէ ազատ պահելու համար զԱյն : Բեթլեհէմի մէջ իր միածին Որդւոյն ծննդեան մեծ հրաշալիքը մտուրին մէջ կը պահէ , յետոյ հովիւներուն ու մոգերուն խրկրպագութիւնը կարծես մոռցնելու համար , մանաւանդ ամբարիշտ բռնաւորի մը ձեռքէն ազատելու պատճառաւ , Անոր հետքը կորսնցնել կուտայ ու կ'ուզարկէ Եգիպտոս՝ ուր Յիսուս կըմնայ կատարելագոյն անժանօթ . ետքը Նազարեթի մէջ կը բնակեցնէ , խաղաղիկ փոքրիկ քաղաք մը՝ ուր ոչ ոք տեղեկութիւն ունի կատարուած հրաշքներու մասին , և ուր ամբողջ երեսուն տարիներ , Յիսուս կը կուտուի Որդի եկեալն , որդի Յովսեփայ և Մարիամու : Այսպէս կը պաշտպանէ Աստուած իր ծայրիկը , այսպէս կը պաշտպանէ մեր Փրկիչը՝ մինչեւ մարդկային փրկութեան գործին սկսած օրը՝ յորում խաչին վրայէն պիտի հեղու մեր ամէնուս վրայ իր բոլոր շնորհաց պատուակաւնագոյն գանձերը :

Օրհնենք ուրեմն զՀայրն Աստուած՝ որուն սնհաստանելի Նախախնամութիւնը կը հսկէ Անոր վրայ՝ որ զմեզ պիտի փրկէ աշխարհի գերութեան շղթաներէն : Օրհնենք զՈրդին Աստուծոյ՝ որ մարմնացաւ մեզի համար յանձնելով իր Անձը իր Հօրը տեսչութեան , հնազանդելով ամէն վշտի ու փորձութեան և ի գործ դնելով ամէն առաքինութիւն Նազարեթի միայնութեան մէջ : Ըլլանք մենք ալ , հետեւելով իր օրինակին , ճշմարիտ Նազովրեցիներ , մեր հնազանդութեամբը և մեր կենաց սրբութեամբը : Այո , ամէնքս ալ , ճշմարիտ քրիստոնեաներ պատուաստուելով Յիսուսիւ Քրիստոսիւ , իւր Ս. Եկեղեցւոյ բուրաստանին մէջ ծաւալենք ամենակալ Աստուծոյ Հօր ծաղկանց անուշահոտութիւնները՝ իրբեւ որդիք լուսոյ ու Երկնից Արքայութեան ժառանգորդք՝ յաւիտեանս յաւիտենից :

## Ք Ա Ր Ո Ջ

(Պատկերայ ի Տօնի Վերացունսն Խաչի յԱզգային Եկեղեցւոյ Մասնէսրի)

Սրբազան Առաքեալն Պօղոս՝ Քրիստոսի առաքեալներէն ամենէն պերճախօսն՝ Կորնթացւոց թրջութոյն մէջ Ա. Աւետարանն մարդկային ճարտարախօսութիւնէ շատ բարձր կրճամարի, և իւր պատճառները այսպէս կրմեկնէ. — « Զի ոչ առաքեաց զիս Քրիստոս մկրտել, այլ աւետարանել. ոչ ճարտարութեամբ բանից, զի մի՛ ընդունայն լիցի խաչն Քրիստոսի: Զի ճառ խաչին կորուսելոցն յիմարութիւն է, այլ փրկելոցս մեզ՝ զօրութիւն Աստուծոյ: » — Ա. Կ. ր. թ. Ա. 17, 20:

Մէկ խօսքով, կուզէ ասել Ս. Պօղոս, հեթանոսք և հրեայք իւրեանց ստացած առանձին կրթութեամբ և իւրեանց սրտի բոլորովին նիւթական ակնկալութեամբ կարող չեղան Աւետարանի հոգեւոր պատգամներ ըմբռնել. այս պատճառաւ Աստուած այնպիսի միջոցներ գործ դրաւ Ս. Աւետարանը քարոզելու համար որ յաչս հեթանոսաց և հրէից յիմարութիւն էր. աշխարհիս ամենէն անարգ և ազէտ ու անկիրթ համարուած անձինք եղան յաւիտենական կենաց պատգամները քարոզեցին աշխարհիս վերայ իմաստութեան և աստուածգիտութեան համբաւ ունեցող անձանց և ազգաց:

Յիրաւի Աւետարանի քարոզութիւն մի հրաշք էր. Քրիստոսի ժամանակ հեթանոսութիւն քաղաքակրթութեան այն բարձր աստիճանին հասած էր որում մեր ներկայ դարու ջանքեր շատ բաների մէջ դեռ չեն կրցած զմեզ հասցնել: Փիլիսոփայութիւն, գեղարուեստ, ռազմագիտութիւն, առողջաբանութիւն, և այլ բազում գիտութիւնք անմերձեանալի բարձրութեան հասած էին. ամէն ինչ աշխարհիս կը պատկանէր և աշխարհիս հետ կապուած էր. « կերիցուք և արքցուք զի ի վաղիւ միռանիցիմք » — այս էր հեթանոսական կենաց նշանաբան. և իւրեանց բոլոր ջանքեր ի գործ կը քնէին այս նպատակին համակու համար: Ինչ որ մարմնոյ հանգստութեան, կիրքերը հագեցնելու կը ծառայէր, նշանակութիւն ունէր անոնց համար: Եթէ մի տեսակ աստուածպաշտութեան հաւատք ևս կար, այն ևս անոր համար էր որ իւրեանց նիւթական հանգստութիւն, փառք ու ճոխու-

թիւն երայխաւորելու և ապահովելու կրճառայէր :

Իսկ Քրիստոսի Աւետարանը որ այս ամենը կը մերժէր, անոնց բոլոր նիւթական ջանքեր ու աշխատութիւն առ ոչինչ կը գրէր, և այս կենաց միակ նպատակն վերացական մի յաւիտենական կեանք կը հուշակէր, որ անոնց մուրեալ մտաց և քարացեալ սրտից համար շատ անախորժ և ամերձենալի էր, իրենց ակնկալութենէն դուրս էր : Հրեայք նոյնքան եթէ ոչ առաւել յուսախար եղած էին Աւետարանի վարդապետութենէն : Թէպէտ և Աստուած ի հնումն ամենաազգու միջոցներ ի գործ դրած էր հրէյց ազգը հեռու պահելու համար հեթանոսական չար միտումներէն, սակայն ժամանակ առ ժամանակ նոքա ևս ընկան հեթանոսաց մուրուրութեանց մէջ, և զԱստուած ու զաստուածային կրօնի ճշմարտութիւն ճանաչել չը յօժարեցան, և յաճախ Աստուածային պատուհասին ենթարկուեցան, և Քրիստոսի ժամանակ իսկ արդէն մի այդպիսի պատուհասի ներքոյ էին : Իւրեանց քաղաքական անկախութիւն կորուսեր էին և հողմէական կայսերաց իշխանութեան կը նպատակէին : Այնու ամենայնիւ իւրեանց վարք ու բարք ուղղած չէին, և սիրտերնին դարձեալ սնափառութեամբ և միմիայն աշխարհային ցանկութեամբ լցուցած էին :

Այդպիսի վիճակի մէջ գտնուող քարասիրտ ժողովրդեան համար Ս. Աւետարանն մեծ հրապոյր չէր կարող ունենալ : Նոքա կը սպասէին մի փրկչի որ մեծ փառքով ու ճոխութեան մէջ ծնուէր, և յաղթական զօրութեամբ Հրէաստան մտնէր, Հռովմայեցի բռնակալներն արտաքսէր և հին հրէական թագաւորութիւնն հաստատէր, Իսրայէլի թագաւորութեան նախկին սահմանները ձեռք բերէր՝ Եփրատի ափունքէն մինչև Միջերկրական ծովն : Ասկէ դուրս յաւիտենական կենաց ոչ գաղափար ունէին, ոչ ճաշակ և ոչ փափագ :

Այս մեծ ակնկալութեանց հանգէպ հրեայք ի՞նչ կը տեսնեն : Մի խեղճ դալիւեացի հիւսնագործի որդի՝ աւելի խեղճ ու ռամիկ աշակերտներով հանդերձ՝ որ հրէական ազգի բոլոր սնափառութիւնը արհամարհելով միայն երկնից արքայութիւն կը քարոզէ և այլ ամենայն ինչ թէ ռարխական աւանդութիւն և թէ փարիսեցւոց և դպրաց վարդապետութիւն ընդունայն կը համարի : Հրեայք զայրամալով նորա վերայ՝ հողմէական ատենի առջև զնա ամենասանաբզ մահուան դատապարտել կը տան, իբրեւ մի մեծ ոճրագործ խաչել կը տան՝ յուսալով այդ ճանապարհաւ նորա վարդապետութիւն լռեցունել : Բայց կը սխալին : Նորա աշակերտք այդ

անարգական գործիքն՝ նորա մահուան խաչն՝ իրրեւ պարծանք եւ նշանաբան Ս. Աւետարանի կրքարողն : Խաչն անարգական լինելէ կրգագրի, եւ Աստուածային զօրութիւն կըստանայ : Նորա վերայ մահուան դատապարտողն յաղթական յարութեամբ կըպոսկուի , եւ զգատապարտողն կըզատապարտէ , եւ յաւիտենական կորուստ կըսպառնայ եթէ իւրեանց նենգամիտ զգացումներ չը փոխեն : Այս ասել կուզէ Սրբազան Առաքեալն երբ կըպոչէ . « Ձի ձառ խաչին կորուսելոցն յիմարութիւն է . այլ փրկելոցս մեզ զօրութիւն Աստուծոյ : Ու՞ր իմաստուն . ու՞ր դպիւր , ու՞ր քննիչ աշխարհիս այտորիկ , ո՞չ ապաքէն յիմարեցոյց Աստուած զիմաստութիւն աշխարհիս այտորիկ : » Ու՞ր մնաց հովմայեցեոց այն ահապին մեծութիւն , նոցա գիտութիւն եւ զօրութիւն . ու՞ր մնաց հրէից մնապարծ ակնկալութիւն . այս ամենը անհետացաւ ի տես սուրբ Խաչին , եւ Ս. Խաչն գործեց եւ կրգործէ ինչ որ նոքա չըկրցան գործել : Փոխանակ Հովմայեցեոց ու Յունաց աշխարհահոչակ փիլիսոփայք եւ ճարտարաբանք Ս. Աւետարանը քարոզելու , փոխանակ հրէից օրէնսուսոյց եւ գիտնական վարդապետներ Քրիստոսի սուրբ կրօնն ուսուցանելու, տեսէք որպիսի՛ խեղճ ու թշուառ անձինք կըձեռնարկեն այդ մեծ գործին : Ս. Պետրոսի պէս անուս ու ռամիկ մարդ մը որ իւր կենաց լաւագոյն մասն Գալիլիոյ ծովակի վերայ ձկնորսութեամբ անցուցած էր . նոյնպէս նորա եղբայրն Անդրէաս , նաեւ Յակոբոս եւ Յովնաննէս ձկնորսներ էին , եւ առաքելութեան կոչուելէ յառաջ իւրեանց հայրենի արհեստին կընհատէին : Մատթէոս հրէից մէջ յոյժ անպատիւ համարուած մաքսաւորութեամբ ժամանակ անցուցած էր : Մէկ խօսքով՝ աշխարհիս ամենէն յիմար եւ անտոհմ ու արհամարհեալ անձինք էլին եւ այդ անարգեալ սուրբ խաչն բարձրացուցին առաջ ի աշխարհի , եւ իւրեանց յիմարութեամբ զաշխարհս իմաստնացուցին եւ լուսաւորեցին , զխոնարհս եւ զանարգս բարձրացուցին եւ ազնուացուցին : Տեսէ՛ք Ս. Խաչի զօրութիւն, երբ գրել կարգալ չգիտցող Առաքեալն Պետրոս յաւուրն Պենտակոստէի մեծ վստահութեամբ եւ ճարտարութեամբ կըքարոզէ առաջի՛ այլ եւ այլ երկիրներէ հաւաքուած ուսումնական բազմութեան առջեւ , եւ 3000 հոգի միանգամայն կըզարձնէ ի հաւատս Քրիստոսի : Նոյնպիսի մեծամեծ արդիւնքներ յառաջ բերին մնացեալ Առաքեալք իւրեանց քարոզութեամբ եւ արդարացուցին Առաքելոյս Պօղոսի խօսքեր թէ՛ « հաճեցաւ Աստուած յիմարութեամբ քարոզու-

թեանն ապրեցուցանել զհաւատացեալս :»

Առաջին դարու քրիստոնէից աղքատութիւնն եւ թշուառութիւնն, ընկերային դասակարգութեանց մէջ իրենց բռնած խոնարհ ու աննշան դիրք, եւ միանգամայն սրտի այն մեծ արիւթիւնն ու քաջութիւնն որով նորա Ս. Աւետարանը կը պաշտպանէին, իրենց կեանք Փրկչի խաչի շաւղովը կ'ուղղէին, եւ իւրեանց արիւն անխնայ կըթափէին ի սէր Յիսուսի, այս ամենը հրէից եւ հեթանոսաց մեծ զարմանք եւ սազութիւն կը պատճառէր, քանզի չգիտէին խաչի զօրութիւնը զոր քրիստոնեայք լաւ հասկացած էին :

Ահա 1900 տարիներէ ի վեր Քրիստոսի խաչի ճառը կը քարոզուի ի վերայ աշխարհի. եւ Քրիստոսի խաչի ճառի աւանդութիւնն մեր ձեռքը հասած է, եւ մանաւանդ մեր հայոցս, որք ամենահին քրիստոնեայ ազգը կը պարծինք լինել. եւ անշուշտ մեր մէջ կան շատեր որ հասարակ ձկնորսէ մը, հասարակ մաքսատան պաշտօնեայէ մը շատ աւելի բարձր կը կարծուին իմաստութեամբ եւ հանճարով : Բայց տեսնենք թէ արդեօք այդ ձկնորս Առաքելոց եւ իւրեանց աղքատիկ աշակերտաց չափ եռանդ եւ սէր դէպ ի Ս. Խաչն կա՞յ մեր սիրտերի մէջ. այդ անգին գանձն, այդ սուրբ աւանդութիւնն վայելչաբար կը գնահատե՞նք, թէ միայն քանքարաթաղոց ծառայի պէս տեղ մը կը պահենք կամ կը համարենք թէ պահուած է, առանց այլ եւս փոյթ տանելու նորա գործադրութեան համար : Ամեն օր կ'աղօթենք՝ « եւ կեսցէ արքայութիւնն քո, եղիցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի », բայց ամենեւին փոյթ չունինք այդ արքայութեան տարածման համար : Մենք որ կոչուած ենք ամբողջ աշխարհին Ս. Աւետարանը քարոզելու, նորա Ս. Խաչն հանդիման բերելու՝ մեր հայրենեաց մէջ այնքան անտարբեր ու անզգոյշ մնացած ենք՝ որ տեղիք տուած ենք օտարազաւան քարոզիչների մեր մէջ քրիստոնէութիւնն ի նորոյ քարոզելու քամածին յապաւումներով կամ սնոտի աւելադրութիւններով. որք եւ աւա՞ղ յաջողած են մեր Եկեղեցւոյ եւ ազգի մէջ մեծամեծ հերձուածներ յառաջ բերել : Հայ. Եկեղեցւոյ պէս աւելի կաթուղիկէ եւ առաքելական եկեղեցի չկայ. նորա պէս աւելի աւետարանական եւ բարեպաշտօն եկեղեցի չկայ. սակայն մեք անարժան որդիքս այդ գորովագութ մօր տեղիք տուած ենք եւ դեռ կըտանք, որ օտարք մեզ ի նորոյ կաթուղիկէ հաւատն քարոզեն, ի նորոյ մեր ձեռքը Ս. Աւետարան դնեն : Ս. Խաչն այսօր մեր ձե-

ուաց մէջ փոխանակ սրբազան Առաքելոյն հոչակեալ զօրութիւնը ցոյց տալու, մեր տկարութիւնն ու թուլամորթութիւն կը ցուցնէ: Փոխանակ Գրիստոսի սուրբ խաչին պարծենալու, հրէից պէս կը գայթակղինք երբ խաչն մեր առջեւ կը դրուի. այդպէս չէ՞. երբ մեր քրիստոնէական պարտաւորութիւնք մեր առջեւ կը դրուին, չէ՞ որ կը գորչենք « Չանըմ այս դարուս մէջ ատանկ բաներ չըլլար: » Հաւատացէք որ առաջին դարու մարդիկ շատ աւելի աշխարհասէր, նիւթապաշտ և մուկ էին քան մեր դարու մարդիկ. այնու ամենայնիւ այն ժամանակ նաչի ճշմարիտ հետեւողներ որուէ դժուարութիւն չը կրեցին իւրեանց պարտաւորութիւններ կատարելու մէջ: Նոքա երբէք չէին ձանձրանար մեծամեծ վասնդներու եւ փորձանաց հանդէպ շոտպել իւրեանց եւ կեղեցին երբ կը ծանուցուէր, և իւրեանց եղբարց հետ ձայնակցիլ ի պաշտօն Աստուծոյ, և յաճախ Ս. Հաղորդութեան մերձենալով՝ զինքեանս զօրացնել ընդդէմ աշխարհի փորձութեանց:

Սակայն այս տխուր իրողութեանց հանդէպ եթէ մէկ մխիթարութիւն կայ մեզ համար, քրիստոնէական այն գիտակցութիւնն է թէ « յիմարն Աստուծոյ իմաստնադոյն է քան զմարդիկ, և տկարն Աստուծոյ զօրագոյն է քան զմարդիկ: » Զմեզ չըջապատող կրօնի անտարբերութեան և գործնական անկրօնութեան հետ խառնուած կան այնպիսիներ որ յաչս աշխարհի նշանակութիւն չունին, յիմար են, տկար են. սակայն այնպիսեաց շնորհիւ և այնպիսեաց սիրտերու մէջ Ս. Աւետարանի ճշմարիտ խմորը թագուցեալ է, և կը յուսանք կամաց կամաց պիտի ներգործէ և մեր Ազգի ու բոլոր աշխարհի այլասեռ տարերց հետ զանգուելով՝ ամբողջ մարդկութիւնը պիտի խմորէ Աւետարանի զօրութեամբ, եւ միանգամ ընդ միշտ ի բաց մերժելով զխաւարն անգիտութեան՝ հաստատէ ի վերայ ամենայն երկրի զանուունն Աստուծոյ, որում վայել է փառք, իշխանութիւն և պատիւ, յաւիտեանս յաւիտենից, Ամէն:

## ԸՆՏԻՐ ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԻՒՆԻՔ

Ազգսօրհն քարզմանեաց 'ի Գաղլիերեհն

ՏԻՐԱՑՈՒ ՅԱԿՈՒ ՍՄԱՋԼՍԵԱՆ

**Ա**ռաքինութեան ազդեցութիւնը այնքան քաղցրը, այնքան հաճոյական է, որ նոյն իսկ տառապանաց մէջ երկնային ուրախութիւն կ'առթէ:

Բարեգործութեան մէջ յառաջդիմելու նախաքայլը չարիք չի գործելն է:

Հողույ կերակուրը ճշմարտութիւնն ու արդարութիւնն են: Մարդու ամենակարեւոր նշանաբանն է ինքզինքը ճանաչել: Ամենաառաջինի մարդն այն է, որ առաքինի ըլլալ կընկրտի օր ըստ օրէ:

Երեք տեսակ տգիտութիւն կայ, առաջին՝ երբէք բան չի գիտնալ. երկրորդ՝ գիտցածը լաւ չըմբռնել, և երրորդ՝ հարկ եղածէն դուրս ուրիշ բան գիտնալ:

(Թող ներուի մեզ չորրորդ մ'ալ մեր կողմանէ աւելցնել. չի գիտցածը գիտցող ձեւանալ, կամ չի գիտցածը ուրիշին սովբեցնել ջանալ:)

Ինչպէս չէ կարելի առանց սիրելու տեսած լինել առաքինութիւնը, նոյնպէս չէ կարելի սիրել զայն՝ առանց երջանիկ լինելու:

Ստոյգ բարեպաշտութիւնը հոգին կըբարձրացնէ, սիրտը կ'ազնուացնէ ու եռանդը կ'ամրապնդէ:

Իմաստութիւնը միակ դանձն է, որուն ապստովութեան համար գողերէ վախնալու բնաւ տեղի չի կայ:

Մարդու խիզը բարոյականութեան էն լաւագոյն գիրքն է. անոր յաճախ հարկ է անալ:

Համբերութիւնը զառն է, բայց պտուղը՝ քայլը:  
— Մի՛ ընե՛ր ուրիշին ինչ որ չեա ուզեր քեզ ընեն — բանաճեի ճշգրիտ ու մեկին գործադրութիւնը բարեգործութեան առաջնաքայլն է. բայց — Հրէ՛ ուրիշին ինչ որ կ'ուզես քեզ ընեն — խօսքի գործնական մտաուութիւնը բուն իսկ առաքինութիւնն է:

Օրէնքներէն ու բարքերէն աւելի ճշտապահ ու խստապահանջ դատաւոր մը կայ. դա այն ներքին զգացումն է, զոր

խիղճ կ'անուանեմք: Այս զգացումը կրիօսի այն ամեն մարդոց, որք անտարբեր չեն գտնուելը անոր ձայնին անաբու: :

Վտանգի մէջ իյնալէ առաջ՝ պէտք է զայն նախատեսել ու վախնալ. բայց անգամ մը որ ինկար՝ այլ եւս զայն արհամարիւ միայն կրմնայ:

Ճշմարիտ քաջասրտութիւնը հանգուրժել գիտնալն է:

Մարդու երջանկութիւնը իր ունեցած հարստութեան մէջ չի կայանար, այլ իր գործել կարողացած բարիքին մէջ:

Ուրիշին ըրած բարիքդ մոռցիր, բայց ուրիշէն ընդունած բարիքդ (միշտ) յիշէ՛:

Մարդիկ, մեծաւ մասամբ, իրենց կենաց մեծագոյն մասը գայլս թշուառացնելու կը գործածեն:

Մուլութիւնը ամեն չարեաց նախադուռն է:

Ձանձրոյթը ծովութեան հետեւանօք աշխարհի մէջ մուտք գտած է:

Աշխատութեան պտուղը հաճոյից ամենաբազմաբանն է:

Աշխատութիւնը ամենայն առաքինութեանց ծնողն է, ինչպէս տղիտութիւնը՝ ամենայն մուլութեանց: Առաջինը կը զօրայնէ մարմինը, անվթար կը պահէ առողջութիւնը, կ'երկարացնէ կեանքը և ժամանակը կարճ կ'երեւցնէ: Իսկ երկրորդը, ընդհակառակն, ծնունդ կը տայ մեղկութեան ու ձանձրութեան, հիւսնագութեանց ու թշուառութեանց, հարուստը կ'առաջնորդէ ամենակերպ մուլութեանց, ու աղքատը կը մղէ բազմատեսակ ոճրագործութեանց:

Առողջութիւնը, մտքի կորույն ու սրտի անգործութիւնը՝ աշխատութեան պտուղներն են:

Անգաղանապահ մարդը կնքատեալ նամակ մ'է, զոր ամեն ոք կարող է կարգալ:

Մորդկան էն հարուստը անտեսագէտն է, էն աղքատը՝ ազահը: — Կեղծաւորութիւնը՝ մուլութիւնը առաքինութիւն ձեւացնող պատրուակ մ'է:

Ստախօսը անարժան է ի թիւս մարդկան համարելու:

Աւելորդ բան գնողը կ'ստիպուի կարեւորն իսկ ծախելու օր մը: — Տեստեսագիտութիւնը ազահութեան ու շոյլութեան միջինն է:

Մեղկութիւնն ու ծուլութիւնը կ'ապականեն էն գեղեցիկ բնօյժներն իսկ:

Հոգեոյն ամեն յատկութիւններէն էն վրեմն իմաստութիւնն է, և էն օգտակարը՝ խոհեմութիւնը:

Ինչ իրաւամբ ուրիշէն՝ կը պահանջենք մեր գաղտնիքը

պահել , Մինչ մինք անգաղտնապահ ենք :

Մարդիկ օգտակարապէս գործածել կարողացած ժամանակնին յաճախ ի գուր կը վատնեն :

Եթէ կեանքը կը սիրէք , ժամանակնիդ վայրապար մի մտնէք : Աշխատութեան սերտիւ փարելէ աւելի հաճոյական անդորրութիւն չի կայ :

Շողջորդութիւնը մեր ստութեանց առուտուրի մէջ գործածուած ընթացիկ կեղծ դրամ մ'է :

Մարդ շատ անգամ կ'ստրջանայ լուսթիւն պահած լինելուն համար : — Համբերատար մարդը տէր է թէ՛ իր անձին և թէ՛ այլոց :

Դրամէն աւելի ժամանակի նկատմամբ պէտք է ազահուսթիւն ընել : — Մեռնիլը ճշմարիտ կեանքի ծնունդն է :

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

### ՆԱՄԱԿ ՓԱՐԻԶԻՆ

#### Սկեղեցականաց Ամուսնութեան Խնդիր

Շնորհազարդ Տ. Հա՛յր ,

Պատուական կրօնաթերթիդ վերջին գրածներն կուսակրօն և ամուսնաւոր փահանայութեան վերաբերմամբ՝ մեծ ուշադրութեան արժանի բաներ են : Քանի՛ քանի՛ վարդապետներ , ո՞րքան այրիացեալ — գոթա՞ղբ քահանաներ գիտեմք , որք ի սկզբան քառի մատիկ էին , պարկեշտ էին , ժողովրդեան օգտակա՞ր , ու անձնդիւր էին , բայց յետոյ՝ գլխրեցան , նշաւակեցան , սպառում ժողովրդի քաւ՛ ու մու ի՛ն երթարկեցան և շարացան . . . . « ժողովուրդ » կոչուած ամ ոխն խելանին ու տխմարն՝ բարեկիրթն ու գոհեցին՝ բարոյասերն ու ազտեղի կեղծաւորն՝ առանց հարցանելու այդ գլուխածիւն — սկամայ չարացողին անկման « զիտող » ն , սկսան ամենեքին՝ ընդ սկամա հայիլ : Պաշտպանել չէ նպատակս այդ անկեայներն , բա՛յց , այդ անարգող աչքերէն շատեր՝ առանց պահիկ մը իրենց վարդաբուրուած կեղտոտ կեանքին վրայ արդարադատ ու քննական հայեացք մը ձգելու՝ անկեղոյն վրայ յարձակեցան . հրապարակաւ ձազկեցին մոլորեալն , առանց գոնե՛ , լուիկ իմն՝

վանական շրջափակի մը մէջ զրկելու և ա՛նդ ապաշխարել տալու ( Եթէ բռնազբօսիկ աշխարուներն ալ՝ ունին նշանակութիւն ) :

Ահա եկեղեցական անկեալ կեանքէն քանի մը իրական դէպքեր: Վարդապետ մը կ'ըսէր. — « 19 տարեկան էի , աւագ սարկաւադ ձեռնադրեցին զիս . դեռ չը դիտէի կեանքն . այսօր 35 տարեկան եմ , չեմ կրնար ժուժել . բայց ի՞նչ ընեմ , պիտի թքնե՞ն ինծի , այսպէս չարաչար պիտի մտչուիմ . » և իրօք՝ մաշեցա՛ւ յուսահատ և մեռա՛ւ՝ օղիի գաւաթն իր ձեռքին . — և մտնկամարդ հարսուէք շուրջ պատած : Աստուածահասճո՞յ էր այդ կուսութիւն . . . . :

Քահանայ մը , 30 տարեկան , անոյգ , պարթեւահասակ , ուսեալ , նիւթապէս ալ հարուստ , առաջի կառավարութեան ազդեցիկ , իր ժողովրդեան մէջ պատկառելի՛ , հայր երկուց զաւակաց , մեռաւ սորա կինն , 2-3 տարիներ ժուժեց . պայքարեցա՛ւ բնութեան դէմ , ո՛չ ոք լսեց իւր ձայնն , ըս՛յր և անիծէ՛ր իր ողբալի կեանքն . ապա՛ ընկճեցա՛ւ սկսան նախատե՛լ , թքանե՛լ և հալածե՛լ սոսկալի իմն . Առաջնորդարան՝ ժողովուրդ՝ և Պատրիարքարան՝ դահիճներ դարձան նմա հանդէպ , այնպէ՛ս որ մնլորեալ — շուարեալն՝ այլախօս եղաւ , և խզքութեանց լրումը եկաւ Ազգին վրայ , և սկսան մերայինք կուրծս բողբոջել թէ՛ « անզգամը հեռացուցի՛նք մեր մէջէն , գնա՛ց , կորա՛ւ » , մինչդեռ մարդը՝ երբ յամուսնաւոր քահանայութեան կեայր՝ շատ սրբութեամբ վարէր զիւր կեանսն՝ Ա . Բ կրտսութիւն կատարելու նախընթաց և կատարած գիշերսն , Ա . Պատկ կատարելու նախընթաց և կատարած գիշերսն , Ա . Պատարազի նախընթաց , և կատարած և յա ողգ գիշերսն սրբութեամբ անցուցանէր : Ա . մուսնաւոր քահանայութեան այնպիսի գիտակցարար և յօժարակամ օրինակահասութեան կեանքն էր հաճելի Աստուծոյ , թէ՛ խեղդ արկեալ ժուժկալութեան՝ նց պահանջմունք :

Այլ ոմն քահանայ՝ պարկեշտ և ուսեալ , քաղցրաձայն երաժիշտ , յուսուցչական կեանքէ եկեալ , ժողովրդային լիսւլի համակրանաց արժանացեալ , զեղադէմ և վալիլահասակ մարդ . սրոյ կեանքն մօտէն ծանօթ էր ինձ . սա՛ թէ և էր յամուսնական վիճակի՛ բայց սրբաբեան ճիպար էր . երբ Ա . Պատարազի մատուցման շրջանավար լինէր 3 գիշեր նախ քան զպատարազելն , և պատարազած աւուր գիշերն և , 3 գիշեր յետ պատարազելոյն՝ եօթնօրեայ սրբութեամբ մնայր յեկեղեցւոջն հսկմամբ և աքնութեամբք : Ա՛յսպէս և՛ ի մկրտելն՝ և՛ ի պսակելն 3 օրեայ հսկմամբ սրբութեան կայր թէ և ի տանն : Այն այս քահանայն՝ ի քառանորդական պահան և յայլ շարաթապահան՝ և ի բովանդակ ի՜շ . Ուր . , և կիրակամտի Նբ . աւուրն հսկեր՝ պահօք և աղօթիւք : Ա՛րդ , ստա՛ ինձ , պատուականդ ի քահանայս՝ շնորհապարզ եղբայր , շինական այս օրինակահաս քահանայի ամուսնական կեանքի սրբութիւնն՝ և գո՛ ելի ժոյժն ու ողջախոհութիւն գերազանց չէ՞ , քան « կուսակիւր » անուանակիր սու՛տ սրբասէրներու ( հազուադիւտ

բացառութեամբ մաքրակեացքն՝ հոշոնիւթեայ հրեշտակնե՛ր են ինձ համար. որոց՝ ակնածանք ու սրտանուէր մեծարանք ունիմ) և այրիացեալ — առ հարկէ ժուժողներու արտաքին կեալ մաքրութենէն (որք՝ արտաքոյ երեւին գեղեցիկք, բայց ի ներքոյ լի են պղծութեամբ և գարշութեամբ): Իս՛յց, զիաէ՞ք ինչ եղաւ այս բարի Քահանային. — դեռ հաղիւ ՅՁ տարեկան էր ինքն՝ և հայր երից զաւակաց, ննջեաց իւր կինն. հէգ քահանայն՝ արցունքի մատնեցաւ. և խտամբեր կեանքով մը իր անունն ու պատիւ անաղարտ պահել ջանաց. թէ և օր օրի շիւթեցաւ և կմխք դարձաւ. մաշումն ստակալի էր, քանզի այդ ատեն, ապականուած մարդկային ընկերութիւնն՝ լիբբ ու զագիր արգ — արարածներ՝ հանդիստ չը թողին զինքն, Քահանայն ո՛չ ումէք ինչ ասէր, և ո՛չ բնաւ տրտնջայր. սակայն փորձութիւնք՝ շուրջ պատեալ էին զնովաւ. մերձ էր ի գթիլ. մօտեցանք և պաշտպանող ձեռն կարկառեցանք, թոյլ չը տուինք, որ խղու առարկայ դառնայ, մնաց յանաղարտ պատուի՛ միջև ցօրն սրախողխող կատարման իւրոյ. . . :

Ասկէ 6 տարի առաջ, 24 տարեկան մի գեղեցիկ և կայտառ երիտասարդ՝ դեռ 1 տարուան ամուսնացած՝ Քահանայ ձեռնդրեցաւ, 6 ամիս յետոյ ննջեց իր կինն՝ 18ամաց: Ընտանոցատի քահանայն՝ սկսաւ դառնապէս ողբալ թէ կնոջ մահն և թէ իր վաղաժամ քահանայանալն. ա՛լ կեանքը անէծք մը դարձաւ իրեն համար. 1-2 տարիներ կամայ ակամայ ժուժեց. այլ յետոյ՝ անկաւ ի խարբալումն սատանայի. որոմն ելլաւ և տկար դաւաւ, մինչեւ իսկ խառնակեաց լինել ընդ օտարազգի կանայս, որպէս զի աղալին. շրջանակէն ծածուկ մնայր իւր կեանքն. աւելի ճիշդն, օտարուհիք բռնած էին իրենց մատղաշ որսն, անկարելի՛ եղած էր ճողոպրիլն, և երբ, ամեն կողմէ շարանախանձ մարդիկ՝ և փոթորկայոյղ և բամբասասէր ժողովուրդն՝ սպասած էին հեապնդել և խուլարկել իր կեանքն, ինքն ելաւ ի հրապարակ, քահայութենէ հրաժարագիր զրկեց ի Պատրիարքարան, (ուր էին սրբակեաց կուսակրօններն և պատրաստ ի գատել յայնձնուած յանցուցեալն) և քաշուեցաւ. . . մը տուն, ուր կ'ապրի ցայսօր (լուած է թէ բողոքականներէ պսակուած է):

Այս դրածներս՝ տեսածներուս ու լուսններուս մէկ հարիւրորդն է, և պարտք մը ճանչցայ գրել առնք խոհական քահանայիդ՝ որպէս զի շուրջ ուշագրութեան առնուլ, խորհիլ, խօսիլ և գրել հաճիք: Չեր կրօնական հրատարակութիւն մեծ դեր կրնա, ունենալ մի այսպիսի կենսական խնդրոյ մէջ: Ես՝ վաւարապաշտ՝ այրիացեալ քահանայ մը եմ. բայց ինձ համար չէ խնդիրն. վասն զի ես՝ 26 տարեկան ամուսնացայ, եօթն տարի վարեցի ամուսնական կեանքս. ապա՝ 33 տարեկան էի քահանայացայ. մէկ տարին երկուցուցուցս սիրայօժար հաւանութեամբն քահանայական. . . . հսկմանց նուիրեցի. . . յետոյ՝ երկուք ու կէս տարի ևս ի քահանայութեանս ամուսնական կենօք կեցայ. ապա՝ զաւկի մահ տեսի,

ընտանի մերձաւոր սիրելեաց մա՛հ տեսի (անշուշտ այդ կսկծալի մահերն՝ ո՛չ նուազ ազդեցութիւն գործէին ի մեզ՝ տակաւ տակաւ հեռանալ աշխարհասիրութենէ, օր ըստ օրէ ընթանալ ի վերջեզրն հանձնյի ու զուարճութեանց կեանքին), արդե՛օք, սխալ են ասածներս . ապա՛ հայրենի բարեկեցիկ տուն՝ և երեցուհւոյս ծնողական մեծահասմբաւ տունն՝ ինչպէս և Հայրենեացս եկեղեցին՝ 4 վարժարանք (2,000) երկու հազար կտոր մնայուն գրեանք պարունակող Մատենադարանն . Հայոց 450 տունք՝ մոխի՛ր դարձան ի Կասպին — Գարահիւսար (ի Փոքր Հայս), մոխրոյ վրայ նստող ու հառաչո՛ղ ժողովուրդին հաց ճտրելու նուիրակա՛ն գործն՝ մեզ վիճակեցաւ . և մեք, «զոր ինչ պարտեաքն և կարեաք առնել, զայն ջանացաք (փոքու իմն) առնել» շնորհիւն Աստուծոյ և խնամօք Ազգիս: Ա՛րդ, մեք աշխարհն վայելեցինք, կշտացանք, երջանի՛կ ալ եղանք, թշուառութիւնն ալ ցմրու՛ր բաժակին քամեցինք . ապա՛ Հայրենի երկրէն պանդխտեցայ՝ և անկայ ի Գատը - Գիւղն Կ. Պօլսոյ 2 տարի պանդուխտ . ապա՛ կինս կըդայ անդ զաւակօքն . այլ յետ 12 աւուրց կինս կքիակէր աչքերն ի քուն մահու յանակնկալ, թողլով ինձ հինգ հատ որբուկներ, երեցագոյնն 12 ամաց, և կրտսերն դուռ կաթնկեր: Արհիւապատիւն Միւլքիսեղիկ Սրբազան Մուրատեանց՝ սիրողն և զՁեզ՝ կըլայր վերթ աղայ՝ իմ դժբաղդութեանց վրայ, համայն Գատը - Գիւղցիք՝ ողբացին զիս, բայց ես՝ որքան որ շատ խռոված երկնքին դեմ՝ թէ և ես՝ իմ հաշիւներս արձակեցի Անսահմանին դեմ, մոլտալով՝ թէ՛ «Ամենուորմ, Ամենազօր, օ՛ն ուրեմն, կշտացիր, հրճուէ այս մայրաղբիկ ձագուկներու արցունքէն» . շատ մոմուացի, բայց, չը լացի, հոգեկան զայրութիւ մը վեր առի իմ աղեխարշ լացող որբերս, և ըսի, «մի՛ լայք . չը պիտի ընկճիմ ես . պիտի սրբեմ Ձեր արցունքն» . դգուեցի եղկելիներն վերաւոր սրտիս վրայ . չը լացի, բայց, չազօթեցի ալ այդ ժամուն . քինապահ էի Այն Ահհուն զօրութեան դեմ. սակայն վերջապէս, ներքին Ձայն մը՝ սասց ինձ . «մի՛ ըմբոստանար . համբուրէ՞ քեզի հպող Աստուածային Ձեռքն և խոժոռ աչքերդ հանդարտեցուր և աղերսալից նայէ՛ դեպ ի վեր» . երկիւղած զգացմամբք համակեալ՝ անկայ յերկիր և հեղ ու գոհարանական մրմունջներս դրի Անքնին Ամենակալին առջև:

Ամենողորմ պահպանեց ու զօրացոյց որբերս, արիւթիւն շնորհեց ինձ, միխթարեաց զիս . հայրս՝ եօթանասնամեկի և մայրս՝ պառաւած՝ հասին ինձ ի թիկունս և առին իրենց հովանւոյն տակ զանոնք . և ես սրտի մտօք սկսայ ծառայել յիմ պաշտամունսն և օրհնեցի զԱստուած: Սակայն, ես կեանքի ամեն տառապանաց բովերէն անցած, երջանկութիւն ու դառնութիւն տեսած, վեց զաւակաց հայր եղած, 39րդ տարեքիս մէջ այրիացած, և վշտերու ու այլազան հոգսերու տակ ճնշուած, ծերունազարդ ծնողացս շրջին տակ ապրող, հինգ որբերէն շրջապատեալ, շատ բնական է, թէ Աստուածանուէր զգացումներէն ու սրբասիրութեան ազնիւ մտածումներէ

յիտոյ՝ սույն այս թուած պարագաներս ալ շատ բնական ազդեցու-  
թիւններ կրնային ունենալ մաքրակեաց և անքաւիր մնալուս գոր-  
ծոյն մէջ . այնպէս չէ՞, և լաւ չէ՞ ճշդութիւնն ասել և գրել ,  
մանաւանդ թէ զաւակ ամուսնացուցեր ու փեսայ ունեցեր եմ . եթէ  
ինքնին մաքրակեր չը լինիմ իսկ , սակայն առ պատկառանաց և  
աւելի ճշմարիտն առ ի գթութիւն զաւակացս պարտիմ մաքուր մնալ ,  
որպէս զի և զաւակունքս անբանբաս մնան ընդ իս , և իմ յանցան-  
քովս նոքա ալ բարոյապէս չը մեռնին ինձ հետ , ահա յստակ և ան-  
կեղծ խորհրդածութիւններս պարզօրէն գրեցի :

Սիրելի Տ. Հայր . Ձեզ անծանօթ , բայց փորձառական կեանքի  
բովերէն անցնող շատախօս մի քահանայի այս թղթի բրբուճներն ,  
խնդրեմ , հաճեցէք անձանձիր կարգալ :

Եկեղեցական ներկայ ապականուած վիճակին վերայ գթալը և  
դաժման ու եւք խորհելու է . բուն սրբութիւնն ու անկեղծ ժուժկա-  
լութիւնն ճանչցնելու է , և շատ պիտի աղնուանայ Հայ. եկեղեցա-  
կանութիւնը . աղտոտ կեանքն մաքրելու է ծածկող կեղեւանքներէն :

Այսպէս մտածէ կեանքի խորն թաքուն շարքներն ցաւօք դիտողն  
ու սոսկացողն

ՎՈՒՍՄԵՍՊՈՒՆ ԲԶ. ՔԻՍՍՐԵԱՆ

Ենորհազարդ Եղբայր ,

Հաճեցէք ընդունել խորին մեծարանքներս : Պատիւ ունեցոյ վայն-  
քէլ տղմներնդ : Գրածս հրատարակելու մասին հարցած էիք . —  
շատ հապճեպիւ գրած էի . եթէ ընթեռնչի եղան գրածներս՝ լաւ .  
թէ ուղէք , ազատ էք հրատարակել պէտքի մասերն ընտրանօք , ըստ  
Ձեր խոհականութեան :

Ի՞նչ շատ ու շատ գրելիքներ կան այժմու վանական ու ( մասնաւոր  
մաքրակեաց բացառութեանց միշտ ակնածանք ) քաղաքակեաց ,  
զուարճասէր ու թափառաշրջիկ վարդապետաց հակականօն վարուց  
վերաբերմամբ . բայց , ոյդոքիկ բաւ են՝ խուլարկու և փորձառական  
կեանքի վերահաստեթեամբ գրուած : ( Խի՞ստ խօսած կ'ըլլամ , թէ  
ասեմ ) — կեղծ կուսակենցաղներ՝ պիտի խոժոռեն , նախ Ձեզ , ապա  
ինձ , բայց , ու՞մ հոգն . . . . : Տէր Զուղայեցին — արդէն մարդոց  
դատափետումներէն սոսկացողի ու շահու նկատմամբ լռողի նկարա-  
գիրը չունի . իսկ , այլազան ցաւօք և դառն կեանքի մէջ մաշուած  
Վ. ամառապարտն ալ իւր աստեղական հաշիւներն փակած ու կեանքի  
հաճոյից վերջակէտի հասած է . անձնական չեն իր գրածներն :

Հայր Պատուական . կամ նշնարիմն ասեմք , կամ եթէ ոչ՝ նշնարու-  
թեան գիրքը ծալլեմք :

Գրուածներուն հանդէպ՝ մոլոցացողներ շատ պիտի լինին , զի շա-  
տեր վարակուած են կեղծիքի փոռքեան վերին . — որմք բռեա՞լք .  
և բնական է , թէ վերաւորին երբ մօտեան վէրքը խորանելու  
կամ հատանելու , կը դժկամակի և կընդդիմանայ , բայց , հարկ է  
պատռել շարաւարից ապականութիւնն , վեր առնուլ գաղտնիքի

վարագոյրն, տեսնել բուն ժահահոտ վիճակն ու դարմանին, մաքրութեանը և իսկական Սրբութեանը համար ձայն բարձրացնել, թէ և մարդիկ նախատեն ու հալածեն ճշմարտախնդիր նախանձայոյցն ու անկեղծ խօսող — գրողն:

Պէտք է ազնուացնել Հայ. եկեղեցականութիւնը, որոյ ամենաուշին պայմանն է՝ կուսակրօնութեան կամաւոր լինելն յամենայն ժամու, և ամուսնաւոր կեանքի ազատութիւնն՝ նեխն նման:

Երկրորդ՝ նիւթական վիճակի ապահովութիւնն, այն է ազատել Քահանայութիւնը հացի կենսական խնդրոյ ներկայ դձուճ կացութենէն, և ահա յայնժամ, Ազնուագգի, օգտակար, պատուաբեր և հաւատարիմ ու ճշմարտիւ երկիւղած եկեղեցականացութիւն պիտի շատնայ, և Ազգն ալ բարոյապէս երջանկանայ:

Զայսոսկ խորհրդածէ յետինն ի պաշտօնեայս Հայ. եկեղեցւոյ, Փարիզ, Թղոսոս 1, 1901. ԿՌԱՄԵԱՊՈՒՇ ՔԷ. ՔԻՊԱՐԵԱՆ



## ՅԻՊՈՒ ՈՍՈՒՆԵՐ

### ՄԱՐՄԻՆ ՈՒ ՀՈԳԻՆ ԻՐԱՐՈՒ ԴԷՍ

ԳՐԵՑ ԱՐԺ. ՏԵՐ ԱՒԵՏԻՍ Վ. ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆՆ .

(Շար . Տես հջ 192, )

#### Հոգին խրատիչ

Յիսուսի խօսք՝ քաջ մարդերուն .  
 Համար քաղցր է, և խիստ սիրուն .  
 Ծոյլեր կըլլան՝ վատ և նրկուն .  
 Անպիտան են, ի՛նչպէս որ դուն :

Յիսուսի սէր՝ չես այսորժամ .  
 Զի այստաւոր՝ սէրն ես ընտրած .  
 Թեթեւ բեռ քեզ՝ ծանր է եկած .  
 Զի մեղաց մէջն՝ ես սողորուած :

Յիսուսի խօսքն՝ յոյժ բարեխաւ .  
 Երկինքն անով՝ է մեզ պըրաւ .  
 Այս մեծ պայմանն՝ Յիսուս դըրաւ .  
 Երբ մեզ երկնից՝ ժառանգ ըրաւ :

## Մարմին Մեկասուր

Միշտ մարմնական՝ սիրոյ բաժակ .  
 Ինձի կուտայ՝ քաղցր ակորժակ .  
 Քու յիշած սէր՝ դանձաճաշակ .  
 Ինձի համար՝ չէ անուշակ :

Յիսուսի սէրն՝ ինձի համար .  
 Անսխորժ է՝ և անյարմար .  
 Ձի իմ քրմաց՝ նա համ չի տար .  
 Անոր անունն՝ ինձի մի՛ տար :

Յիսուսից սէրն՝ ինձի ցուցու՛ր .  
 Օրինակով՝ ալ հասկըցու՛ր .  
 Բայց ես ըսեմ՝ այդ սիրոյ հուր .  
 Ինձ կը թըւի՝ սառուցած ջուր :

## Հոգին Յանգիմանից

Թըշուառ մարմին՝ ըզբեզ գիտցի՛ր .  
 Մեղաց քընէն՝ մէկ մ՛ արթընցիւր .  
 Մըտքով դէպ ի Յիսուս դարձի՛ր  
 Չայն լաւ խորհէ՛ ու ճանչըցի՛ր

Յիսուս ըզմեզ՝ այնքան սիրեց .  
 Մինչև սաճար՝ իւր համարեց .  
 Իւր սուրբ մարմնով՝ մեզ կերակրեց .  
 Եւ իւր մահով՝ կեանք մեզ սըւեց :

Մենք ալ զայն միշտ՝ պէտք է սիրենք .  
 Նորա պատուէրն՝ ալ կատարենք .  
 Մեր կամքն անոր՝ կամքին յարենք .  
 Մեր անձն անոր՝ զո՞ն նըւիրենք :

## Մարմին Հրամարեալ

Անձս Յիսուսին՝ ես չեմ գոհող .  
 Նորա պատուէրն՝ ալ չեմ պահող .  
 Այդ խընդիրներդ՝ կ'աղաչեմ թո՛ղ .  
 Արդէն քեզմէ՛ եմ ճանձրացող :

Հինգ լուծ եզանց՝ ինձ եմ ճարած .  
 Սըրախ արան ալ՝ ցանած , վարած .  
 Հեշտութեան սերմն՝ արդէն բուսած .  
 Պըտղոց յուսով՝ եմ ըզմայլած :

Մընաս բարեալ՝ ո՛վ իմ ընկեր .  
 Նըպատակէս՝ զիս մի՛ զըրկեր .  
 Այսուհետեւ՝ քեզ չեմ լրսեր .  
 Հեռըդ բընալ՝ ալ չեմ խօսեր :

## Հողին՝ Յիսուսին դիմող

Մարմինս ինձի՝ հաճ հաւան չէ .  
 Չար վարմունքով՝ զիս կըտանջէ .  
 Խըրատնեւուս՝ իուզ ականջ է .  
 Չար խօսքեր միշտ՝ կըբարբանջէ :  
 Քեզ կըզիմեմ, ո՛վ Տէր Յիսուս .  
 Շուտով օգնէ՛, թըշուառ Հոգւոյս :

Մարմինս ինձի՝ զէմ կըզքնէ .  
 Ձիս իւր կրօնից՝ զերին կընէ .  
 Նա կատաղի դազան մըն է .  
 Մեղաց թոյնով՝ կըմեռցընէ :  
 Կենագործող՝ դուն ես Յիսուս .  
 Յարութիւն տուր մեռած Հոգւոյս :

Դժբոսս մարմինս՝ է անխըրատ .  
 Այո՛, իբրն՝ խօսած եմ շատ .  
 Բայց նա ինձի՝ չէ հարազատ .  
 Ինձ զէմ ներհակ . որոշ ու զատ :  
 Չօրութիւն տու՛ր լըքեալ հոգուս .  
 Յաղթել մարմնոյս, ո՛վ Տէր Յիսուս :

Կըրիստոսի ըզքեզ սիրել .  
 Մի՛ ինչ եւանջով՝ քեզ ծառայել .  
 Յօժարութեամբ՝ պատուէրդ պահել .  
 Բայց ժանտ մարմին՝ կըլլայ արգել :  
 Չօրաւիզ լե՛ր՝ արկար հոգուս .  
 Սիրել ըզքեզ, ո՛վ Տէր Յիսուս :

Մոլի կիրքով՝ եմ վարակուած .  
 Ներքին դաւաճ՝ յոյժ նիհարցած .  
 Չար գեւերուն՝ գործիք դարձած .  
 Ամէն մեղօր՝ բեռնաւորուած :  
 Ձիս արձակող՝ դու ես Յիսուս .  
 Արձակուում տու՛ր՝ կապուած հոգուս :

Երեք կարգ են՝ իմ ոտխներ .  
 Նախ՝ սատանան՝ և իւր դեւեր .  
 Երկրորդ՝ աշխարհն՝ և իւր փառքեր .  
 Երրորդ՝ մարմինն՝ և իւր կիրքեր :  
 Կործանող են՝ թըշուառ հոգուս .  
 Վերականգնողս՝ դուն ես Յիսուս :

Մարմնոյ կիրքեր՝ միշտ գրգռուող .  
 Աշխարհ մարմնոյն՝ նիւթեր տուող .  
 Իսկ սատանայ՝ թակարթ լարող .  
 Ասանք կըլլան՝ զիս սրսացող :  
 Ո՛վ ազատիչ Տէր, իմ Յիսուս .  
 Մի՛ տար զիս սրս՝ ոտխներուս :

Մըրըրկածուփ տլեաց նրման .  
 Չար խորհուրդներ՝ յիս կըծըփան .  
 Մարմնոյս նաւուն՝ մըրըրիկ կուտան .  
 Ընկըզմելու մահ կըսպանան :  
 Իմ ապաւէն՝ զուն ես Յիսուս .  
 Շուտով օգնէ՛՛ նեղեալ հոգուս :

Ուղեւոր եմ՝ մեղաց ծովով .  
 Ալէկոծուած՝ զիւաց հողմով .  
 Ծանրաբեռնեալ՝ շատ հոգերով .  
 Կըկործանուիմ՝ ընկըզմելով :  
 Ո՛վ նաւապետ՝ բարի Յիսուս .  
 Ձեռքդ հասցու՛ր՝ ընկըզմելուս :

Մեղաց ծովն ինձ՝ սարսափ կուտայ .  
 Իրբեւ գարնան՝ ամպ կ'որոտայ .  
 Ինձ կորըստեան՝ վիհ կըբանայ .  
 Ուր ձըգելու՝ զիս կըջանայ :  
 Ո՛վ Պետրոսի փըրկող Յիսուս .  
 Ողորմի՛ր ինձ՝ վըտանգելուս :

Տըզմասահուտ՝ ճանրայ ունիմ .  
 Պիղծ խորհըրդով՝ յաճախ կիյնիմ .  
 Մեղաց տըզմով՝ կըչաղախուիմ .  
 Խիղճիս խայթով՝ կըչարչարուիմ :  
 Կանգնողս զուն ես . ո՛վ Տէր Յիսուս .  
 Սիրով գըթա՛՛ անկեալ հոգուս :

Ես ներքին մարդս՝ յոյժ տառապած .  
 Մարմնոյս բանտի՛ մէջն եմ փակուած .  
 Չար խորհըրդով՝ եմ պաշարուած .  
 Այցելութեանդ՝ միշտ կարօտած :  
 Քեզ կըզիմեմ . ո՛վ Տէր Յիսուս .  
 Դուն այցելէ՛՛ բանտեալ հոգուս :

Գիշեր ցորեկ՝ քեզ կ'աղաչեմ .  
 Ախ ու վախո՛յ՛ կըհառաչեմ .  
 Արտասուելով՝ սիրտ կըյուզեմ .  
 Մարմնոյս բանտէն՝ ելնել կուզեմ :  
 Հա՛ն զիս բանտէս , Տէր իմ Յիսուս .  
 Վերջ տու՛ր կենաց՝ պանդխտելուս :

Յիսուս՝ Հոգւոյն Բազալեր  
 Գիտեմ, մարմնդ՝ ըստամբա՛կ է .  
 Բարի կամքիդ՝ միշտ ներհակ է .  
 Բայց նորս սանձ՝ կամքիդ տակ է .  
 Սանձով մարմնոյդ՝ յաղթանակէ :  
 Մի՛ վընատիր , յուսա ինձի .  
 Ես կ'օգնեմ քեզ , ո՛վ խեղճ հոգի .

Մարմնոյդ վըրայ՝ իշխող ըլքեզ .  
 Եւ կառավար՝ դըրած եմ ես .  
 Տըռփոս մարմնոյ՝ ձայն թէ լըսես .  
 Յաղթըւած ես , ուզես չուզես :  
 Բղգուշացիր , մարմնէդ , հո՛գի .  
 Որ ես պաշտպան՝ լինիմ քեզի :

Մարմին արդէն՝ պիղծ անօթ է .  
 Մեղսասէր եւ՝ անամօթ է .  
 Կեղծաւոր ու՝ չողփրթիք է .  
 Իր սանձ ձեռքէդ՝ շուտ կըշորթէ :  
 Սանձ մի՛ յանձներ՝ մարմնոյդ , հոգի .  
 Որ վերջ չըլլաս՝ անոր գերի :

Զիս թէ սիրել՝ կըցանկանաս .  
 Պէտք է մարմնոյ՝ նախ ուրանաս .  
 Ապա ինձմով՝ կըզօրանաս .  
 Եւ ետեւէս՝ գիւրին կուգաս :  
 Այսպէս յաղթող՝ կըլլաս , հո՛գի .  
 Ես ալ պըսակ՝ կուտամ քեզի :

Ներքին ցաւերդ՝ ես լաւ գիտեմ .  
 Որովհետեւ՝ քու բըժիշկդ եմ .  
 Երբ զըզման մէջ՝ ըզքեզ գրանեմ .  
 Անմիջապէս՝ կըբըժըկեմ :  
 Քու յոյսն ու կեանք՝ ես եմ , հոգի .  
 Զըզման շաւղով՝ եկուր ինձի :

Աշխարհ , մարմին՝ եւ սատանայ .  
 Քեզ ոտիս են , և միշտ ներկայ .  
 Ատոնց յաղթել՝ կըգիւրանայ .  
 Երբ որ մարմնոյ՝ զըսպուած մընայ :  
 Զըսպէ մարմնոյ , իշխող հոգի .  
 Զօրացընող՝ ես եմ քեզի :

Աշխարհ մեղաց՝ որոգայթ է .  
 Զի գեւն անով՝ մարդ կըկարթէ .  
 Ո՛վ որ չընորձք՝ ինձմէ մաղթէ .  
 Սատանային՝ նա կը յաղթէ :  
 Միշտ աղօթքով՝ գիմէ ինձի .  
 Որ օգնութեան՝ գամ քեզ , հոգի :

Այս կենցաղն է՝ արէսաստ ծով .  
 Զոր կըշարժէ՝ գիւային հով .  
 Նաւդ մի՛ բառնար՝ մեղաց բեռով .  
 Որ չընկրդմիս՝ ալիքներով :  
 Ալեաց հիբրայ՝ գոչէ՛ ինձի .  
 Քու նաւ փրկող՝ ես եմ հոգի :

Սատանաներ՝ նրւաճած եմ .

Եւ ոտից տակ՝ կոխկըռտած եմ .

Քեզ ալ կոխել՝ պատուելիւմ եմ .

Զը վախնալու՝ սիրտ արււած եմ :

Իմ ճըմկած օձ՝ կոխէ , հոգի .

Եւ գօրութիւն՝ կուտամ քեզի :

Ինձի համար՝ կամքըդ թող տու՛ր .

Բարոյական՝ խաչըդ վերցու՛ր .

Իմ շաւիղովս՝ ինձի եկու՛ր .

Որ չը ճըգուիս՝ դժոխքի հուր :

Խաչով պէտք է՝ դիմես ինձի .

Որ փըրկուիս՝ ինձմալ , հոգի :

Ո՛վ որ ինձի՝ չը հաւատայ .

Նա միշտ իւր կամք՝ մարմնոյն կուտայ .

Այնպիսին է՝ մատնիչ Յուզայ .

Զիս կըթողու . դժոխք կերթայ :

Քու սէր ու կեանք՝ ես եմ հոգի .

Սերտ հաւատքով՝ դիմէ՛ ինձի :

Խաչով եմ քեզ՝ համար եկած .

Խաչով խոնարհ՝ լուծն եմ առած .

Խաչիս վըրայ՝ եմ քեզ զոհուած .

Խաչի մահով՝ քեզ կեանք տըւած :

Ո՛վ իմ արեամբ՝ գընեալ հոգի .

Դուն ալ սիրտըդ՝ զոհէ ինձի :

Խաչով քեզի՝ ճանբայ բացի .

Դէպ ի երկիրք , ուր ես գացի .

Քեզ անդ երկիրք՝ պատրաստեցի .

Քեզ իմ փառաց մատնակցեցի :

Պատրաստ կեցի՛ր՝ միշտ , ո՛վ հոգի .

Երբոր կոչեմ , շուտ գաս ինձի :

Իմ պատուէրներն՝ եթէ պահես .

Նըչան է որ՝ զիս կըսիրես .

Օր մը քեզի՝ կ'այցելեմ ես .

Մարմնոյդ բանալն՝ կրտանիմ քեզ :

Քեզ պըսակովն՝ ես եմ , հոգի .

Երբ արժանի՝ լինիս ինձի :

Վ Ե Ր Զ



## ՆԱՄԱԿ ՌՌԻՍՍՍՏԱՆԷՆ

(Մեր պատուական Ռուսահայ բաժանորդաց ի միասնօրինակ կրկնաստակեմք հետեւեալ գրութիւն զոր ստացած եմք Թիֆլիսի Գրականական Պաշտօնեղբայրներէն :)

Գերազատիւ Հայր Սուրբ .

Ձեր հրատարակած « Հայ. Եկեղեցի » կրօնաթերթը անխափան թոյլ է տրվում մուտք գործելու Ռուսաստանի սահմանը, և Ձեր բաժանորդներն անարգել ստանում են իր ժամանակին, վասն զի ցենզուրական կոմիտէն ցայժմ արգելած չէ նորա մուտքը Ռուսաստանում :

Մնամ յարգանք, խոնարհ ծառայ,  
Թիֆլիս, Յուլիս 16 1901. Ա. ԳՐԵՄԻՇԵԱՆ.

---

## Ա Ձ Դ

Կրօնաթերթիս անցեալ տարուայ թիւերն այլ ևս բաժանորդագրութեան պայմանաւ չեն ծախուեր. այլ Ա. - Ժ թիւերն միասին կրվաճառուին՝ անկազմ 4 Շիլինգի (5 Ֆրանքի) . գեղեցիկ կանաչագոյն լաթակազմով՝ ոսկեգօծեալ վերնագրով՝ 5 Շիլինգի (6 Ֆրանքի) :

Յետայսու նոր բաժանորդագրութիւն կընդունուի միայն ներկայ տարւոյս Յունուարէն կամ Յուլիսէն :

